Յեվ ինչպես միշտ, Ֆարբիցիուսն իրավացի յեր : Յերբ հակառակորդը փորձեց շուրջանցել բրիդադը թեկց, կարմիր հեծելավաշտերը դրուի դիմեցին : Հակառակորդի առաջին տողանը կտրվեց, իսկ մնացածները վճռելով, վոր Ռուսություց արդեն առաջին հեծյալ բանակը դուրս է յեկել Ֆարբիցիուսին ողնության, սկսեցին խուճագով նահանջել :

... Շարժվելով ընկեր Վորոշիլովի պլանով, Առաջին Զիավոր բանակը Տորզովայա, Սպիտակ Գլխա, Ֆիլովեցկոյա կայսրաների մոտ հարձակվեց սպիտակների վրա և սրբեց, ջախջախեց նրանց : Փրկուտակների վրա և սրբեց, ջախջախեց նրանց :

Դենիկինը ջախջախվեց :

... Կարմիր Բանակը դեռ Դենիկինի հաջիվը չերվերջացրել, յերբ միջազգային բուրժուազիան յերրորդ արշավանքը կազմակերպեց դեպի մեր վիրավոր, տանջված, քաղցած հայրենիքը :

1920 թվի գարնանը Խորհրդային Ռուսաստանի դեմ դուրս յեկան սպիտակ լեհերը : Մարչալ Պիլսուդսկին վոչ միայն Ռեկրաֆնան եր ուղղում ձեռք գցել, այլև յերազում եր դրավել Մոսկվան և վոչնչացնել Եռոհրդային իշխանությունը :

Լենինի-Մտալինի կուսակցությունն ուժեղ դիմադրում կազմակերպեց լկտի լեհ հավատակիչների դեմ :

Կարմիր բանակի լավագույն դիվիզիաներով եշելոններ եյին գալիս Սիրիրից, Ուրալից և Հյուսային Կովկասից : Նրանց մեջ եր նաև կիկլիձեյի անվան 16-րդ դիվիզիան :

Հուլիսի կեսերին 16-րդ դիվիզիան մտավ Արևմտյան ուղղաձակատի դիվիզիաների մարտական կազմի մեջ, վորոնք կովում եյին սպիտակ լեհերի դեմ :

Կարմիր Բանակից ստացած մի շարք դիպուկ հարվածներից հետո սպիտակ լեհերը գլխապատճ փախան դեպի Վարշավա :

... Մորգոն : Խրամատների իիստ ամրացրած դիմ, յերկաթ, բետոն, փշալարե փակոցների անթիվ շարքեր, դայլահորեր, ճյուղապատվարներ, կրակե մրրիկ : Թվում եր, թե բոլորը Ֆարբիցիուսի բրիդադի ճանապարհի վրա յեր ընկած :

Հարկավոր եր արագ կերպով ռւսամասներել նոր տեխնիկան, տիրապետել ավելի բարդ առկատիկան ձևերին, նույնիսկ հին, փորձված զինվորական

մասնագետներն անզոր կերպով ձեռներն եյին թափա-
հարում :

Բայց Ֆարբիցիուսը չեր ընկճվում :

Հարկավո՞ր ե սովորել, կոսվորենք: Յեթե կու-
րակցությունը հրամայի, ամեն ինչ կհաղթահարենք, —
առում եր նա: Յեվ զիշերը լեհական զգեստ հա-
ղած մարտիկների մեկ խմբով դնաց հետախուզման:

Ֆարբիցիուսը մանրազնին կերպով դիտեց սպիտակ
լեհերի դերքերը, բրիգադ վերադառնալով, լուս ուղե-
վորվեց դեպի սակրավորների խումբը:

— Բնկերնե՞ր, արագ իմ յետելից, — հրամայեց նա:

Սակրավորները մկրատները վերցնելով՝ բրիգադի
հրամանատարի յետելից փորսող տալով ընդհուռա-
պուեցան փշալարե փակոցներին:

— Կանոնավոր կերպով անցք բաց արեք փակոց-
ների մեջ առաջին շարքից մինչև տամներորդ շարքը, —
կամաց հրամայեց Ֆարբիցիուսը:

Վաղը սպիտակ լեհերի ամրոցը վերցնելու յենք
զնալու:

Սալյորները գործի կալան:

Լուսացավ: Սկսված հրետանային կրակն ուժեղա-
նում եր յերկու կողմից:

Ֆարբիցիուսը կաղմեց հարձակման իր նոր պլանը:
Գնդերից մեկը փակոցների մեջ բացած անցքով պետք
է հարվածեր սպիտակներին՝ թեփ կողմից. մյուս յեր-
կուսը պետք ե նետվեյին նրանց դիրքերի վրա: Սպի-
տակ լեհերը հարձակման դիմեցին: Ֆարբիցիուսի բրի-
գադը սկզբում նրանց հանդիպեց կրակով, իսկ հետ-
ովիններով: Սվինային կամին չդիմանալով, սպիտակ-
լեհերը վայր դցեցին դնդացիքներն ու հրացանները.

Իմաստան դեպի իրենց խրամատները, այն հաշվով,
վոր փակոցների յետեւում կթագնվեն:

Բայց Ֆարբիցիուսն իր գնդերը քայլառքայլ տա-
նում եր սպիտակ լեհերի յետելից, վորոնք արդեն ըս-
կըսել եյին կրակել գնդացիքները՝ մահացու կրակով
բնաջնջելու խիզախներին, վորոնք սիրտ եյին անում
ռըուհել ամրությունների վրա:

Շմած հակառակորդը սարսափով տեսավ, թե
կարմիր մարտիկները վորքան հեշտ են հաղթահարում
փշալարե փակոցները: Թշնամին չեր եւ կասկածում,
թե նրանք դեռ յելքել են քանդվել:

Ճակատից ու թեից այսպիսի համարձակ հարձա-
կում չսպասելով՝ հակառակորդը նահանջեց՝ կորցնե-
լով բազմաթիվ գերիներ, դնդացիքներ և ուրիշ սպա-
ռազինում:

Մնորդոնը վերցված ե... Ֆարբիցիուսը կարմիր
ռըուի յերկրորդ շքանշանն ե ստանում, իսկ նրա գըն-
դերը պարզեվատրվում են Համառուսական կենտրոն-
կոմի պատվո հեղափոխական գրոշներով:

Հավատարիմ լինիյան, տաղանդավոր կազմա-
կերպիչ և նրբազդաց ու կարեկից ընկեր Ֆարբիցի-
ուսն իր մարտիկների համար հերոսության, անվե-
հերության և անձնազության որինակ եր ծառայում:

Ոստրով քաղաքին տիրանալու համար մղված
կովում բրիգադի մասերն ընկան սպիտակ լեհերի մա-
հացու կրակի տակ: Ամեն ըոպե կարող եր ատրերային
նահանջ սկսվել: Ֆարբիցիուսն իր շտաբի հետ միա-
սին առաջին շղթաներում գտնվելով՝ տեղափորվել եր
բզրակի վրա: Ուշադրություն չդարձնելով թշնամու

կրակի վրա՝ նա կոչիկները համեց և սկսեց ութիւն վոտնամաններ հագնել:

Կարմիր բանակայինները, վարակված իրենց անվախ հրամանատարի որինակով, տոկուն կերպով դիմացան կրակի մրրկին և թշնամուն վոչ մի թիղ հող չող չող ջեցին:

... 1920 թվի աշունն եւ : Այն ժամանակ, յերբ հաղթական Կարմիր բանակը անխնա ջարդում եր սպիտակ լեհերին, Ղրիմում իր վորջից դուրս սողաց բարոն Վրանցելը :

Հոգնած ու տանջված Կարմիր Բանակի զորացաւ սերն սկսում են հետ քաշվել Վարչավայրի պատերից :

Ֆարբիցիուսի բրիդադը նահանջում եւ կատարյալ կարգով, ամեն քայլափոխին թշնամու դեմ դիմադրություն կազմելով : Նա համառ կոկվներ եւ մզում Սվիալոչ դետի մոտ :

Մարդիկ ուժապառ են յեղել : Նշանակալից են նաև վնասները : Ֆարբիցիուսը մինչև ուշ գիշեր իր մարտիկների հետ եւ :

Բայց լույսը հաղիվ եւ բացվում և արյունահեղ կոկվները նորից են սկսվում : Կովող մարտիկների մեջ, նրանց գրավելով ու խրախուսելով, ու յս փունջով, հաղիվ իր յետեկից համոզ պատվիրակատարի հետ միասին յերեւում եւ Յան Ֆարբիցիուսը : Հայտնի չեւ թե այս համեստ ու անվեհեր մարդը յե՞րբ եւ քնում ու հանդստանում :

Ահա ձին պատվիրակատարին թողնելով՝ նա պառկում եւ հրացանաձի կողքին, և վերցնելով նրա հրացանը, դիպուկ կրակոցներով լոեցնում եւ հակառակորդի գնդացիրը, շարքից հանելով նրա բոլոր սպա-

սարկողներին : Ահա չուռա՞ աղաղակներու նա ինքն անձամբ վաշտը հակագրոհի եւ տակում և Սվիսլոչ վետն անցնելու պատրաստ հակառակորդի մասերին ճանապարհից չեղելով, նորից ձի յե նուտում ու չտապում այստեղ, ուր խոչընդու, չփաթկածություն, անհաջողություն կա :

Ուստասուի կեսերին Ֆարբիցիուսն արդեն 48-րդ գիվիդիայի հրամանատարն եւ :

Լոմժայի տակ դիվիզիան չըջապատված եր սպիտակ լեհերով : Լեհերը տեսնելով, թե ինչպես են մեկը մյուսի յետեկից պապանձվում դիվիզիայի գնդացիր ները, ցնծության մեջ են :

— Վազը բուշելիկներին մերկ ձեռներով կվերցնենք, նրանց փամփուշտներն ու արկները վերջացել են, — վճռում են նրանք :

— Ընկերներ, — մոտ ժամանակի վերքից յերբեմն կնճռութելով ասում եւ ֆարբիցիուսը հրամանատարներին ու քաղաշխատողներին, — ինչ ուղում եւ լինի, պետք եւ ճեղքել ու անցնել լեհական ողակը : Բայց դրա համար փամփուշտները ու արկեր են հարկավոր : Մենք չունենք, բայց կունենանք : Զերվոնի թոր կայարանում լեհական եշելոն կա հրապաշարով : Ո՞վ կդա ինձ հետ՝ սպիտակ լեհերից արկեր ու փամփուշտներ խլելու :

Գնալ ուղեցին բոլորը, բայց Ֆարբիցիուսն ընտրեց լավագույններին :

Զոկատը հերոսական հարձակումով դրավեց Զերվոնի թորը և զենքի պաշարը խլեց : Դիվիզիան սպիտօվ ու հրով ճանապարհ բացեց իր համար :

Ֆաբրիցիուսի լայն կուրծքը պարդարվեց Կարմիր
դրոշի յերբորդ չքանչանով:

...1921 թվի ձմեռն ե: Կրոնշտադտում սպիտակ
դպրոցիականները, եսերներն ու մենչևիկներն Ան-
տանտայի բուրժուազիայի հրահանգով խորհրդային
իշխանության ղեմ ապստամբություն եյին բարձրաց-
րել: Այդ ժամանակ Մոսկվայում նիստ ունեցող կու-
սակցության Խ համադումարը ընկեր Վոլոցիւչիվ
դլասավորությամբ իր 300 պատգամավորներին ուղար-
կում և ճնշելու ապստամբությունը: Պատգամավորների
մեջ և նաև Յան Ֆաբրիցիուսը:

Պատգամավորները բաժանված եյին ըստ գնդերի:
Հարձակումից առաջ նրանք զրույցներ ունեցան մար-
տիկների հետ և ուսումնասիրում եյին առաջիկա կը-
ռիկների տեղերը: Մինչև կրոնշտադտյան մարտկոց-
ները համատարած սառուց եր: Այս սառցային հար-
թության վրայով ել պետք ել շարժվեյին գրոհող զո-
բաժաները:

Սկսվում եր փառահեղ, պատմության մեջ չը-
անդամած մի գործողություն— ծովային ամրոցի գը-
թօհը ցամաքից:

— Հաշվի առ, Յան, — ասում եյին Ֆաբրիցիուսին
շաբաթ, — վոր քեզ հանձնված 501-րդ գունդը մար-
տահանակ չե, նրա պետքազմի մի մասը մատնիչ դավա-
ճան դուրս յեկավ և փախավ գնդի հրամանատարի
հետ միասին:

— Վոչինչ, — ժպասց Ֆաբրիցիուսը, — մի կերպ
յուշ կզնանք:

Ֆաբրիցիուսի պայծառ, արտահայտիչ ձառն
ուղղված գնդի զինվորներին, իր ազդեցությունն ու-
նեցավ: Գունդն ամբողջովին յենթարկվեց Ֆաբրի-
ցիուսին:

«Կարմիր բանակայինների շրջանում, — հետո հի-
շում եր Ֆաբրիցիուսը, — լուրեր եյին պտտում, թե
մեր ճանապարհը փակելու նպատակով ապստամբները
կրոնշտադտի շուրջը ջարդել են սառույցը:

— Դնալուց մենք չենք հրաժարվում, — ասում ե-
րին 501-րդ գնդի կարմիր բանակայինները, — գնալը-
կզնանք, իսկ յեթե այսուեղ ջուր լինի՝ բոլորս մեկ
մարդու պես կիսեղովենք:

— Դատարկ բաներ, — ասացի յես, — սառույցը
կոտրված չե, սառցի վրայով մինչև կրոնշտադտ կը-
հասնենք և լուսաբացին քաղաքում կլինենք:

— Լավ ես համոզում մեզ, — ասաց ինձ կարմիր
բանակայիններից մեկը — իսկ դու մեզ հետ կդա՞ռ,
ընկեր:

— Կդամ, — ասացի յես, — միայն թե յես այժմ
չեմ համոզելու, այլ հրամայելու յեմ, դու այդ լավ
հիշիր:

Ուղիղ կես գիշերին գունդն սպիտակ խալաթներ
հազար՝ արշավանքի դուրս յեկավ: Կրոնշտադտից
յերեք վերստ հեռու ամրոցային լուսարձակները—գի-
շերվա մեջ պտրում, չոշափում եյին մեր ուժերը:
Հաղորդում եմ հրամանը.

— Շղթա՛ կազմել:

Բայց թշնամին արդեն նկատեց մեզ: «Սկսատո-
պոլ» և «Պետրոպալավովսկ» զրահակիրները փոթորկա-
նման կրակ բաց արին մեր առջեռում գնացող 499-րդ

էնդի վրա։ Գումարը կրակին չդիմանալով, յետ դարձավ, ընկալ նրա յետեից հարձակվող 501-րդ գնդի վկա՝ կործանման վտանգի տակ դնելով նրան։ Յես հրամայում եմ։

Թող պառկի, ով ուզում ե կենդանի մնալ»։

Հրամանը կատարված ե։ Ֆաբրիցիուսը կանդնցնում ե նահանջող դունդը և ընդունում նրա հրամանատարությունը։ Նա շրջում ե կարմիր բանակայինների շլթաները և յուրաքանչյուրին համոզում ե, վոր նահանջելը գրոհելուց ավելի վտանգավոր ե։

Անսպասելի կերպով, հազարավոր կրակներ փռելով ձյունի վրա, նորից փայլեցին լուսարձակները։

— Տեսնո՞ւմ եք, — հանդիստ ու բարձր ասում ե ֆաբրիցիուսը, — միակ յելքը առաջ նետվելն ե, քանի դեռ նրանց հրետանին մեզ նշանի չի առել։

Յեվ «ուսա՞» աղաղակով ֆաբրիցիուսն առաջ ե նետվում առաջինը։ Կարմիր բանակայինները՝ նրա յետնից։

Յեվ իրոք՝ տուժեցին միայն դանդաղած վերջին շարքերը։

Գնդերը խուժեցին կրոնշտագտ։ Փողոց փողոցի յետեից, կետ կետի յետեից խլում են նրանք դավաճաններից։ Գիշերվա ժամը 2-ի մոտ խոռվությունը լիկվիդացիայի յեր յենթարկված, և կրոնշտագտյան ամրոցի խարսխակայանում կանդնած նավերի «Սեվաստոպոլ» և «Պետրոպավլովսկ» զրահակիրների վրա նորից բարձրացան Խորհուրդների հանրապետության դրոշակները։

Կարմիր դրոշի չորրորդ շքանշանը փայլեց Յան Ֆաբրիցիուսի կրծքին։



Զարդված են հանրապետության անթիվ թշնամիները, բայց ջարդված լինելով ել նրանք առիթի յեն սպասում, վոր հարձակվեն խորհրդային յերկրի վրա։ Յան Ֆրիցելիչ Ֆաբրիցիուսն առաջիւ պես իր դիրքումն ե։ Հանդստից ոգտվելով, նա սովորեցնում ե ուրիշներին և սովորում ե ինքը՝ հարստացնելով քաղաքացիական կոմի իր ահազին ուազմական փորձը նորագույն ուազմագիտական իմաստով։ Անձնական փորձով նա դիտե, վոր տեխնիկան ապագա պատերազմում խոշոր դեր ե խաղալու։

Ավարտելով պետկազմի բարձրադույն ակադեմիական դասընթացները՝ նա կորպուսի հրամանատարի և կոմիսարի պատասխանատու պաշտոնն ե ստանում։ Այսուհետեւ ֆաբրիցիուսը կովկասյան կարմրադրուգանակի զորքերի հրամանատարի ոգնական ե։

Զինվորական աշխատանքի և ուսուցման հետ միասին ֆաբրիցիուսը պարագում ե կուսակցական և պետական մեծ գործունեյությամբ։ Նա մի քանի անդամ ընտրվում ե Անդրկովկասյան ԽՖՍՀ կենտրոնական գործադիր կոմիտեյի և կառավարության անդամ։ Կուսակցության XI համագումարից սկսած՝ ֆաբրիցիուսը բոլոր կուսակցական համագումարների մշտական անդամ ե։ Կուսակցության XV համագումարում նրան ընտրում են կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի անդամ։

Հրճվելով իր յերեխաներով, նա հպարտությամբ ասում եր.

— Սրանք ել բոլշևիկներ են։ Սրանք մեղ փոխարինողներն են։

Յեվ փաղաքանքով համբուրում եր նրանց։

Դեպի ժողովրդի թշնամիները դաժան ու անողոք վերաբերվող բոլշևիկ։ Յան Ֆաբրիցիուսը բարի ոիրտ ուներ։ Մինչև իր կյանքի վերջը Ֆաբրիցիուսն իր կապը չկտրեց իր նախկին մարտիկներից, բանվորներից, պյուղացիներից։ Ամեն առավոտ նրա սեղանի վրա նամակների կույտ եր լինում։ Դրանք իր ծառայակից-կարմիր բանակայիններից, հրամանատարներից, քաղաքաստողներից ստացված նամակներն եյին։ Նրանք նրա հետ բաժանում եյին իրենց վիշտը, հայտնում եյին իրենց ուրախությունների մասին, պատմում եյին իրենց ունեցած կասկածների մասին, թուլության բոպեյին պաշտպանություն եյին վորոնում։

Յեվ Ֆաբրիցիուսը վոչ մի նամակ անպատճեան չեր թողնում։

1929 թվի ոգոստոսին Յան Ֆրիցելիչ Ֆաբրիցիուսը բժշկվում եր Սոչու սանատորիայում։ Սակայն բանակի հոգսերը նրան հանդիսատ չեն տալիս։

«Բժիշկները, — զբում եր նա իր բարեկամներից մեկին, — ուղում եյին, վոր յես մնամ մինչև սեպտեմբերի 2-ը, բայց յես մնալ չեմ կարող, վորովհետև մերի գանում ողոստոսի 27-ին դորախաղեր են սկսվում։ Անձամբ ինձ համար ներկա լինելն ողտակար կլինի, լեռնային կովի պրակտիկա կստանամ։ այդ հարցը մեզանում դեռ չառ թույլ ե մշակված։»

Եթե վորևէ պատճառով չհաջողվի սավառնակում տեղ ստանալ, այդ դեպքում մինչև Բաթում կերթամ շոգենավով, իսկ այստեղից՝ յերկաթուղով, բայց այդ բավականությունը յերկու որ կտեհի այնպես վոր չառ ձեռնտու յե գնալ ողային ճանապարհով։

Կովկասյան Կարմրադրուց բանակի զորքերի հրամանատարի ողնական Յան Ֆրիցելիչ Ֆաբրիցիուսն շտապելով իր կորպուսի և գիվիդիայի մոտ՝ գնաց ավառնակով։

Ծովի վրա մոտորը կանգնեց, դեռ ան չհասած՝ ինքնաթիւն ընկավ ծովը և սկսեց կամաց-կամաց խորասուզվել։ Ֆաբրիցիուսը մի քանի վայրկյան շընչապառ եր լինում կարինում։ նա միայն կարողացավ փոկերն արձակել։ Հետո ջուրը ներս հոսեց։

Յերբ սավառնակը դուրս հանեցին, Յան Ֆրիցելիչ Ֆաբրիցիուսն արդեն մեռած եր։ Այդ բանը պատահեց 1929 թվի ոգոստոսի 25-ին։





ՊԱՐԽՈՄԵՆԿՈ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅԱԿՈՎԼԻԿԻ

«Նրա կյանքը մի գեղեցիկ ներար
եր, պրոլետարական փողու մեծության
սիմվոլ»:

(Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ.)

Ահա նա՝ ՖԼԻՔՍԱՆԴՐ ՅԱԿՈՎԼԵՎԻՔ Պարխոմենկոն
կանգնած է մեր առաջ վորպես կենդանի մարդ:

Նրան, այդ լեզենդային դիմիութեալետին, լավ էն
հիշում Դոնբասի բանվորները:

Նրա, Լուդանսկի այդ բանվորի, ընդհատակյա
բոլշևիկի, Վորոշիլովի ընկերոջ ու բարեկամի մասին
Լուդանսկի հին բանվորները հետաքրքիր և ուշարդրավ
շատ բան են պատմում իրենց յերեխաներին:

Նրա մասին, վորպես խակական պրոլետարական
հերոսի մասին, անմահ հիշատակ կա մեր մեծ հայ-
րենիքի աշխատավորների որտերում:

Ալեքսանդր Պարխոմենկոյին շատ լավ ելին ճա-
նաչում և բարձր ելին գնահատում ընկերներ Լենինն
ու Ստալինն:

Խորհրդային կառավարությունը նրա արիությու-
նը, համարձակությունը և անձնազոհությունը Կար-
միք դրոշի յերկու պատվանշաններով և վոսկե ժամա-
ցույցով նշեց:

Բոլորը, ովքեր անձամբ ճանաչում ելին Ալեքսան-
դրը Յակովլեևիչին, պարզ հիշում են այս կենսուրախ,
բարձրահասկ, բարեկազմ մարդուն, վորը Փիզիկա-
կան ահսուդին ուժ ուներ:

Հիշում են նրա հասարակ բաց գեմքը:

Նա հրաշալի ընկեր եր:

Նա կարողանում էր խակապես սիրել, կատակել և
ծիծաղել: Բայց Պարխոմենկոյի բարեհոգի և սիրալիք,
մուղ-շալանակաղույն աչքերն սպառնազին ելին դառ-
նում, յերբ նա դործ էր ունենում թշնամիների, վախ-
կուների, մորթեալաշտների, դավաճանների հետ:
Այսուեղ նա անողոք էր ու անինա:

14-րդ դիմիութեայի մարտիկները, հրամանատար-
ները, քաղաքատողները համարյա ամեն կովում
տաք սուսերամարտի մեջ ելին տեսնում իրենց դիմի-
ութեայի անվախ պետին: Լեհական պաները, պետյու-

րականները, սպիտակ-դվարդիականները, ամեն տեսակ բանդիտները լավ են հիշում 14-րդ դիվիզիայի մարտական ձիերի գործումը, 14-րդ դիվիզիայի սրերի հաղթական զնդոցը:

Պարխումենկոյի հրամանատարության տակ 14-րդ հեծյալ դիվիզիան վորպես պատժիչ սուր եր անցնում Ուրբախնայի տափառաներով ու դաշտերով, Արևմբռյան յերկրամսոսով, Տավրիով ու Ղրիմով՝ վոչընշացնելով մեր հայրենիքի թշնամիներին:

Եերբ 1935 թվին Լուգանսկի բանվորները վճռեցին արձան դնել Ս. Յա. Պարխումենկոյին, ընկեր Վորոշիլովը քաղաքային կուսկոմիտեյին հեռագրեց «Վողջունում եմ և կատարելապես պաշտպանում Լուգանսկի պրոլետարների վորոշումը՝ հարգել հիշատակը լավագույն լուգանցու, բոլշևիկի, ամենախելոք մարդագույն աշխատավոր և բոլշևիկի, ամենախելոք մարդու, հրաշալի ընկերոջ— Ալեքսանդր Յակովլեվիչ Պարխումենկոյի»: Վոչ թե միայն յես, այլ Լուգանսկի հազարավոր աշխատավորներ ճանաչում ու սիրում են Պարխումենկոյին: Հավանորեն այժմ ել հիշում են այդ իսկական պրոլետարական հերոսին: Նրա մահը ծանր կորուստը փոխարինեցինք թշնամուն հասցմենք այդ կորուստը փոխարինեցինք թշնամուն հասցմած կործանիչ հարվածով: Այժմ Պարխումենկոյի համար մենք կամրացնենք՝ կրթելով բոլշևիկների հիշատակը մենք կամրացնենք կամրացնենք՝ կրթելով բոլշևիկների նոր սերունդը, վոր նույնպես անսահմանորեն նվիրված ե բանվոր դասակարգին, ինչպես նվիրված եր մեր հանդուցյալ բարեկամ Ալեքսանդր Յակովլեվը»:

Ալեքսանդր Յակովլեվիչ Պարխումենկոյն ծնվել է 1885 թվի ուսումնական 30-ին Մակարով-Յար (այժմ Պարխումենկո) դյուլում, Հյուսիսային Դոնեցի ափին:

Ալեքսանդր Պարխումենկոյի ծնողները Հողառուրկ, անգրագետ դյուլացիներ եյին: Հայրը կծուճներ եր շինուամ ու թրծուամ: Յոթ հոգուց բաղկացած ընտանիքը մեծ կարիքի մեջ եր: Մեկ անգամ Պարխումենկոյի մայրը զնաց չոր փայտ ժողովելու կազակների անտառուամ: Կազակների անտառապահները նրան բռնեցին և այնպես ծեծեցին, վոր յերեք ամիս հիվանդ պառկելուց հետո մեռավ:

Ութ տարեկան հասակում Պարխումենկոյն զյուղական ուսումնարան մտավ: Նա նստում եր միենույն նստարանի վրա իր ատագա կնոջ և մարտական ընկերուհի Խարիտինա Գրիգորյեվնա Շաբինսկայայի հետ, վորը հետազում հեղափոխական ու հրամանատարական ամբողջ ճանապարհն անցավ նրա հետ միասին:

Մոր մահից հետո առաջին հերթին Լուգանսկ աշխատանքի զնաց նրա մեծ յեղայր իվանը, վորը նույնպես հետազում հեղափոխական-բոլշևիկ դարձավ:

Տասը տարեկան Սաշային Լուգանսկում իր մատվեցը նրա պատը՝ Սեմյոն Պարխումենկոյն: Նա զրկիր եր: Սաշան յերեք տարի շարունակ նրա հետ ջուր եր կրում Լուգանսկի հարուստների տները:

Տասներեք տարեկան հասակում վորպես «ծառա» աշխատանքի մտավ Լուգանսկի ինժեներներից մեկի մոտ:

1900 թվին Սաշա Պարխումենկոյն իր տիրոջն աւաց:

—Ուզուամ եմ գործարան մտնել, իսկական աշխատանքով պետք ե զբալվել, արհետ սովորել:

Իվան յեղբայրը Սաշային ոգնեց վորակես աշա-
կերտ տեղավորվել Հարտմանի շոգեկառքեր շինող
դրծարանի մեխանիկական արհեստանոցում։ Ալեք-
սանդր Պարխոմենկոն շուտով սովորեց հղելու բարդ
գործը և յերեք տարուց հետո արդեն լավ վահանա-
դործ եր։

— Ե՞ս, այ թե հիմա սովորեյի տեխնիկական
դպրոցում, — յերազում եր Սաշան, — բայց ի՞նչ մի-
չոցներով։ Ինչուս յերեսում ե՝ այդ դպրոցները մեզ,
բանվորներին համար չեն։

1903 թվին Ալչեսկում Յուրյելի «Դյումո» գոր-
ծարանի բանվորների շրջանում հեղափոխական աշ-
խատանք տանելու համար հալածված բոլշևիկ կլիմ
Վորոշիլովը վորպես ծորակներ շինող, մտավ Հարտ-
մանի գործարանի ձուլման ցեխը։ Նա իր հետ հեղա-
փոխական պայքարի փորձ բերեց և իսկույն մտավ
գործարանի ղեկավարող հեղափոխական միջուկը։ Սա-
շա Պարխոմենկոն Վորոշիլովից աչք չհեռացնելով,
լսում եր նրա ճառերն այն մասին, թե բանվորը մեկ
ճանապարհ ունի — հեղափոխականի ճանապարհը, պայ-
քարի ճանապարհն ինքնակալության և կապիտալիզմի
դեմ։

Տասնութ տարեկան Ալեքսանդր Պարխոմենկոն 1904
թվին մտավ բոլշևիկների կուսակցության մեջ, և
հենց այդ ժամանակից սկսած նրա կյանքն ամբողջո-
վին նվիրված եր հեղափոխությանը, ժողովրդին։ Նա
քնում և ձեռք ձեռքի տված իր ուսուցիչ և բարեկար
կլիմ Վորոշիլովի հետ։ Նա կատարում ե նրա տված
մարտական խնդիրներն սկզբում ընդհատակյա հեղա-
փոխական աշխատանքի գծով, հետո խորհրդացին իշ-

խանության որդաններում, և վերջապես Կարմիր գվար-
դիայի և Կարմիր Բանակի շարքերում։

Լուգանսկում ունեցած ընդհատակյա աշխատանքի
ապրիներին Պարխոմենկոն ակտիվ մասնակցում և բո-
լոր գործադղուներին։ Նա ընդհատակյա տպարանում
թուցիկներ և տպագրում ու տարածում բոլոր ցե-
խերում, զենք և հայթայթում Վորոշիլովի կազմա-
կերպած ուղմիկ-դրուժիննիկների համար։ Նա հըս-
կում ու պահպանում է իր ուսուցիչ Վորոշիլովի կյան-
քը, իսկ 1903 թվին, յերբ Վորոշիլովին անցնում և
անեղալ դրության, նրան թագցնում է իր մոտ։

1905 թվի փետրվարին Կլիմ Վորոշիլովը Լուգան-
սկում բողոքի գործադղուլ և կազմակերպում Գետեր-
բուրգում տեղի ունեցած հունվարյան բանվորական
ջարդի դեմ։ Միաժամանակ Վորոշիլովը Հարտմանի
գործարանի բանվորների անունից մի շարք տնտեսա-
կան պահանջներ և ներկայացնում վարչությանը։

Լուգանսկի գործարանների անհանդիստ սուլց-
ները բանվորներին հրավիրում եյին վերջացնել աշ-
խատանքը։

— Ընկերներ, թողեք աշխատանքը, — ցեխից-
ցեխ անցնելով ու մոտորները կանդնեցնելով կոչ եր
անում Ալեքսանդր Պարխոմենկոն, — զետի միտի՞նդ։

Գործադղուլ արին Հարտմանի գործարանի 7000
բանվորները։ Գործադղուլավորներին միացան զինվո-
րական գործարանի, եմալի գործարանի, յերկաթու-
ղային արհեստանոցների բանվորները։ Գործադղուլ,
վոր ղեկավարում եր Վորոշիլովը, վերջացավ բան-
վորների հաղթանակով։ Բանվորները պատգամավո-
րական ժողով ընտրեցին՝ Կլիմ Վորոշիլովի գլխավո-

բությամբ։ Պատղամավոր ընտրվեց նաև Պարխոմենիկոն։

1905 թիվն ե... Մայիսմեկյան ցույց։ Կլիմ Վորոշիլովը և Պարխոմենիկոն կարմիր դրոշակով անցնում են Լուգանսկի կայարանի պերոնով։

Թե՛ վոստիկանության, թե՛ ժանդարմների, թե՛ սե-հարյուրակայինների հետ ունեցած մարտական ընդհարումների ժամանակ Պարխոմենիկոն միշտ առաջ եր գնում, վոչ մի քայլ յետ չմնալով Կլիմ Վորոշիլովից։ Մի անգամ սե-հարյուրակայիններն հարձակվեցին Հարտմանի գործարանի բանվորների ցույցի վրա և դրոշակակը ձեռքից կարմիր դրոշակը խլեցին։ Պարխոմենիկոն բուռնցքներով դես ու դեն գըշելով սե-հարյուրակայիններին, մոտեցավ դրոշակին, ճանկեց այն և իր գլխից բարձր բռնած, առաջ գնաց։ Ցույցը շարունակվեց։

Հարտմանի գործարանում յերկրորդ դործադուլը, մոր տեղի ունեցավ 1905 թվի հուլիսին, ջախջախվեց։ Վոստիկանությունը պատղամավորական ժողովը ցըշեց։ Ժողովի ղեկավար Կլիմ Վորոշիլովը ձերբակալվեց և լուգանսկի բանտում մենավոր բանտարկության յենթարկվեց։

Պարխոմենիկոյին հաջողվեց խուսափել ձերբակալությունից։ Վոչ մի ըոպե նա չի մոռանում իր ուղությունից։ Վոչ մի ըոպե նա չի մոռանում իր ուղությունին։ Նա Հարտմանի և զինվորական գործարանի բանվորների շրջանում ուժգին ադիտացիա յե անում՝ պայքարելու Վորոշիլովին աղառելու համար։ Նա ակտիվ պայքար է մղում սե-հարյուրակային ջարդարանների դեմ։

1905 թվի դեկտեմբերի ե... Հարտմանի դործա-

բանում 8000 բանվորների միտինգ ե։ Այստեղ շատ բանվորներ կան նաև ուազմական գործարանից, եմալի գործարանից, յերկաթուղային արհեստանոց միտինդին հսկում ե խսպրավնիկը։ Ահա հնչեցին Պարխոմենիկոյի, ուրիշ ընդհատակյա-կուսակցականների և անկուսակցական ակտիվիստների ձայները։

— Ազատություն Կլիմ Վորոշիլովին։ ազատե՛՛ Վորոշիլովին։

— Ազատություն բանտարկված բանվորներին։

Հազարավոր բանվորներ դնացին դեպի բանտը և այնտեղ իրենց ուղածն արին։ Բանվորների միահամուռ ճնշման տակ խսպրավնիկը կարգադրեց բանտից ազատել բանտարկվածներին։

— Կլիմ, բարե՛, — բանտի դոների մոտ Վորոշիլովին ուրախ վողջունեց Պարխոմենիկոն։

Նորից միասին աշխատանք։

Մեկ անգամ ընդհատակյա նիստի ժամանակ Վորոշիլովին ասաց։

— Հին բանտը մարդասպաններն սկսել են նորոգել։ Ընկերներ, հարկավոր ե այրել այն։ Դահիճներն այդ բանտը պատրաստում են աշխատավոր ժողովը դպրոցակի, նրա պաշտպանների համար։

Յեկ Ալեքսանդր Պարխոմենիկոն մի խօսմք բանվորների հետ այրեց բանտը։

Վոստիկաններն ու ժանդարմները վազուց ելին աչքի տակ առել յերիտասարդ փականադործ Ալեքսանդր Պարխոմենիկոյի բարձրահասակ, պնդակադմ Փիդուրը։ Նրան հաշվի տակ առան վորակս անուղղեացիկ հակափախականի։ Ակսեցին հետապնդումները, վորոշիկ հեղափախականի։

բոնք չընդհատվեցին մինչև 1917 թվի Ռիտարվարյան
հեղափոխությունը:

1906 թվին Պարխոմենկոյին հեռացրին Հարտմա-
նի գործարանից : Նա զնում է Մակարով-Շար դյու-
քը և այստեղ 1906 թվի հուլիսին կուսակցության
հանձնարարությամբ գյուղացիների ասլստամբություն
և կազմակերպում, վոր ընդգրկում և շրջակա բոլոր
դյուլերը :

Ապստամբությունը հաջող անցավ : Գյուղացիները
կարողացան կալվածատերերին հողի վարձագենը ի-
շեյնել տալ 15 ոռություց մինչև 1 ոռութի 90 կոտեկի :
Ապստամբությունը կազմակերպված եր Հրաշալի
կերպով : Դեռ այն ժամանակ, 1906 թվին, սաստիկ
վախեցած կալվածատերերը, զեմստվային պետերը և
կազմեները, վորոնց զինաթափել եր Պարխոմենկոն,
սեփական կաշվի վրա զգացել եյլն բանվորների և
դյուղացիների միացած ուժերի հզորությունը :

1906 թվի նոյեմբերին Պարխոմենկոն առաջին
անգամ ձերբակալվեց ու բանտ ընկավ : Բանտից դուրս
դալով՝ նա ամբողջ եյությամբ հեղափոխական աշ-
խատանքի յե կողում՝ ամեն բանում ողնելով վորո-
շիլովին, կատարելով կուսակցության պատասխանա-
տու հանձնարարությունները :

Յերկրում վոստիկանական ամենասարսափելի
տեսոր է : Յարական զորքերն աշխատում են հրով ու
օրով ճնշել հեղափոխական շարժումն Ուուսաստա-
նում : Ռեպեսիաների ալիքը մինչև Լուդանսկ հասավ :
Լուդանսկի կազմակերպությունը պրովոկատորների
ոգնությամբ ջախջախվեց : Վորոշիլովը ձերբակալվել

և աւ աքսորվել հեռավոր Հյուսիս : Զերբակալությու-
նից ազատ մնացած բանվոր-բոլցեիկները խոր ընդ-
հատակ են քաշվել : Նրանց հետ և նաև Ալեքսանդր
Պարխոմենկոն : «Լավը ուշա» Պարխոմենկոյի ընդհա-
տակյա մականունն եր : Նա շատ դժվարությամբ կա-
րողացավ գործի, ածուխ լվանալու, անցնել «Կոնոպ-
լյանկա» շախտում : Այստեղ, Պարխոմենկոյի ընակա-
րանում բանվոր-բոլցեիկների գաղտնի նիստեր են տե-
ղի ունենում : Այստեղ հեղափոխական անլեգալ դրա-
կանություն են կարդում, այստեղից շրջակա շախտե-
րըն են հանում հեղափոխական թուուցիկներ :

Վրա հասավ 1909 թվականի ամառը : Ընդհատա-
կյա-հեղափոխական աշխատանքը չեր դադարում :
Անցագրեր եյին հարկավոր վոստիկանության կողմից
հետապնդվող հեղափոխականների համար : Կուսկագ-
մակերպությունը Պարխոմենկոյին և հանձնարարու-
անցագրերի բլանկներ ճարելը : Պարխոմենկոն յերկու
ընկերների հետ միասին թեթև քեֆ և սարքում և խը-
մեցնում ե կուզանսկի ստանիցայի կազմեների ատա-
մանին : Յերբ ատամանն զգաստացավ, Պարխոմենկոն
անցագրերի բլանկներն առած՝ արդեն շատ հեռու
յեր ...

Կուսակցական կոմիտեյի ցուցումով Պարխոմենկոն
վոստիկանության հետապնդումից թագնվեց Սեփա-
ստոպոլում :

Գաղտնի վոստիկանական առաջադրություններով
ուուսական քաղաքները թռան լուսանկարչական նկար-
ներ : Նկարներից կը քու կերպով նայում եր բարձրա-
հասակ, սեահոն ու բելսավոր ըհղատակյա գործիչ
Ալեքսանդր Պարխոմենկոն :

Բայց այս անդամ վոստիկանությունն այնուամենայնիվ կարողացավ գոնել նրան։ Նա ձերբակալվեց 1909 թվի սեպտեմբերին Սելատոպոլում, ծովի առփին, զաղտնի խորհրդակցության ժամանակ։ Դրիմի ու Տավրի վրայով ետապով հասցրին Լուղանսկի բանտը։

Պարխոմենկոն ձիավորի հսկողությամբ գնում երայն տեղերով, վորտեղ հետո, 1920 թվին, նաև, վորպես 14-րդ դիվիզիայի պետ, ջարդեց բարոն Վլահելի բանակը։

1909 թվի հոկտեմբերից մինչև 1911 թվի մայիսը վոստիկանությունը Ալեքսանդր Պարխոմենկոյին մհկուսացված պահեց Լուղանսկի բանտում։

Այդ բոլոր ժամանակ Պարխոմենկոյի կինը մաներ դալիս առանց գործի։ Հենց վոր նա իր աղքանունն ասում եր, խկույն առանց պատճառները բացատրելու նրան ասում եյին։

— Բոլշևիկ-բանտարկյալների նամանց ծառայության չենք վերցնում։

Պարխոմենկոն բանտից դրում եր կնոջը։

«Տինա, յես բանտում քրեականներին վերադաստիքակում եմ, նրանք ինձ հարդում են, յենթարկվում են ինձ, ուշադրությամբ լսում են, յերբ յես խոսում եմ բոլշևիկյան կուսակցության անելիքների մասին, նրա պայքարի մասին, դամբք հեղափոխության մասին։ Յես նրանց սովորեցրել եմ հեղափոխական յերգեր։»

1911 թվի վերջին Պարխոմենկոյին դատեցին Մարով-Յարի գյուղացիների 1906 թվի ապստամբու-

թյունը ղեկավարելու համար։ Դատարանը Պարխոմենկոյին բանտարկության դատապարտեց։

Դատից հետո Պարխոմենկոն Լուղանսկի բանտում նստեց մինչև 1912 թվի դարունը։

Վոչ բանտը, վոչ ժամանակները չկարողացան կոտրել Կիմ Վորոշիլովի անդրդպի աշակերտ Պարխոմենկոյի հեղափոխական վողին։

Փետրվարյան հեղափոխությունը բռնկվեց։ Մոսկվայի եքաղավատորային կոմանդայի շարքային զինվոր Ալեքսանդր Պարխոմենկոն և նրա ընկեր զինվորները ջարդում են զորանոցի դռները, վոր փակել եյին սպաները։ Փողոց ընկնելով՝ նրանք գնում են զինաթափելու վոստիկանությանը, գնում են կովելու հականեղափոխության դեմ։ Պարխոմենկոն գրոհում ե հեռադրատան շենքի վրա։ Նա Կարմիր-Պլեսնյան մարտական թաղամասի ջոկատներից մեկի պետն ե։

Պարխոմենկոն 1917 թվի մարտին դարձյալ Լուգանսկումն ե։ Նա ոգնում է Վորոշիլովին Կարմիր զվարդիան կազմակերպելու։ Իսկ սեպտեմբերին, յերբ իշխանությունը փաստորեն անցավ Վորոշիլովի կողմից ղեկավարվող բոլշևիկների ձեռքը, Պարխոմենկոն զիսավորում է Լուգանսկը պաշտպանող հանձնաժողովը, գլխավորում է Կարմիր զվարդիան։ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Վորոշիլովը գընաց Պետրոգրադ՝ Լենինի մոտ։ Պարխոմենկոն ղեկավարում եր Լուգանսկի ամբողջ ուղղական աշխատանքը։ Նա միաժամանակ և՛ քաղաքի պարետն ե, և՛ կարմիր պետն ե, և՛ կարմիր զվարդիական ջոկատների կազմակերպիչն ե։

Լուգանսկի բանվորներից Պարխոմենկոյի կազմած

Ճոկատը 1917 թվի դեկտեմբերին ջախջախեց յեռառուզ Զերնեցովի հակածեղափոխական ջոկատը:

1918 թվի հունվարին Պարխոմենկոն անարկիստ նավատիների զրահաւենացքի հրամանատարն եր: Նա հաճախ խոսում եր նավատիների հետ, բացատրում երանց ճանապարհի կեղծ լինելը, վերադաստիարակում եր նրանց և վերջապես նրանց հետ միասին այն ժամանակի սպիտակ-կաղակական մայրաքաղաք Նովչերկասկում ջարդում և կալեղինյաններին:

Մարտի սկզբին Վորոշիլովը Լուգանսկի իր առաջին սոցիալիստական պարտիզանական ջոկատը տասնում և արևմուտքից յեկող ստարերկրյա ոկուպանուների հորդայի գեմ: Զոկատի շտաբի պետը և Վորոշիլովի ոգնականը Սլեքսանդր Պարխոմենկոն ե:

Վորոշիլովի հետ միասին նա անցավ Դուրովյազգովկայից (Կոնոտոպի տակ) մինչև Ռոդակով, վորտեղ Վորոշիլովը կազմակերպեց 5-րդ բանակը: Նրա հետ միասին Պարխոմենկոն մի առասպելական արշավ կազմակերպեց Լուգանսկից մինչև Յարիցին:

Իր 5-րդ բանակի գնդերի պաշտպանության տակ Վորոշիլովն 80 եշելոն տարավ Լուգանսկից դեպի Յարիցին՝ արժեքավոր ռազմանյութերով, բանվորների և 5-րդ բանակի մարտիկների ընտանիքեց բազկացած տասնյակ հաղարավոր վախստականներով:

Յեվ «գնում եյն արյունոտ վերստերով», Կամինսկի, Գունդորովկայի, Լիխայայի, Մեծ Կալիտվայի Կրիվո-Մուզդինսկի, Զիբի վրայով, և ամեն աեղ սկուպանտների և սպիտակ կաղակների հետ ռանեցած կուպանտների հակած հաղարավոր Պարխոմենկոն քաջության ու անվեհեկաբներում հարկած եր յերևան բերում:

1918 թվի հունվարին Վորոշիլովն իր յերեսուն հայարանոց բանակը բերեց Յարիցին՝ Ստալինի մոտ: Յարիցինի հերոսական պաշտպանության ժամանակ Ստալինն ու Վորոշիլովը Պարխոմենկոյին ուղարկեցին իւնքնաթիռներով, թնդանոթներով, գնդացիրներով և ուրիշ անհրաժեշտ զենքերով ու հանդերձանքով: Պարխոմենկոն հաջողությամբ կատարեց իր անելքքը, իսկ հետո Յարիցին վերադառնալով, մասնակցեց շատ կոփմների:

1919 թվի հունվարին Պարխոմենկոն Խարկովի կայազորի պարետն ու պետն եր: Նա զինաթափում է վերջին եշելոններով ոտարերկրյա ուղևորվող ոկուպանուների հաղարավոր զինվորներին:

1919 թվի դարձանը Պարխոմենկոն Յեկատերինուալյան սազմական ըրջանի հրամանատարն ե: Վորոշիլովի հանձնարարությամբ, վորն այդ ժամանակ Յեկատերինայի ներքին դործերի ժողկոմը և ներքին քրոնտի հրամանատարն եր, Պարխոմենկոն ջախջախում և գրիգորելյան բանդամերին: Նա Յեկատերինուալյան անձամբ բնաւմ և գնդակահարում ե դաժան ատաման Մաքսյուտին:

1919 թվի ամառը Պարխոմենկոն Խարկովը պաշտպանում և նրա վրա յեկող գենիկենցիներից:

1919 թվի աշնանն ընկերներ Ստալինն ու Վորոշիլովը Պարխոմենկոյին հեռագրով կանչեցին նոր կազմակերպվող Առաջին Հեծյալ բանակի շտաբը: Պարխոմենկոն Առաջին Հեծյալ բանակի ռազմահեղափոխության իորհրդի հատուկ լիազոր ե: 1920 թվի հունիսական իորհրդի հատուկ լիազոր ե:

վարի սկզբին Առաջին Հեծյալ բանակը վերցրեց Ռուսականը: Պարխոմենկոն Ռուստովի-Դոնի և Նախիջեվանի առաջին պարետն և նշանակվում:

1920 թվականի ապրիլից Պարխոմենկոն Առաջին Հեծյալ Բանակի 14-րդ գիվիդիայի պետն ե:

1920 թվի հունիսին Պարխոմենկոյի գիվիդիան Սկվիրի մոտ առաջինը ճեղքեց սպիտակ լեհերի ռազմաճակատը: Սպիտակ լեհերի ճակատը ցնցվեց: Սպիտակ լեհերը թողեցին իրենց գրաված կիեվը և խուճապահար փախան դեպի Վարչավա: Նրանց յետեւց սրարշավ գնում ելին Առաջին Հեծյալ Բանակի ձիավոր գնդերը: Լուղանսկի փականադործ-բոլշևիկ Պարխոմենկոյի դիվիդիան վերցնում ե կայարաններ, քաղաքներ, ջախջախում ե սպիտակների թիկունքները: Հաղթական կերպով կովում ե Նովոդրադ-Վոլինսկի, Ռուբնոյի մոտ, փոթորկանման կրակի տակ զուսով անցնում ե Սլուչ, Բուգ, Ստիր գետերը, գրավում ե Դուբնո բերդը և արիաբար կովում ե Զամոստյեյի մոտ: Այստեղ, լեհական ֆրոնտում, Պարխոմենկոն ուղերատիվ արվեստի զարմանալի վարակտություն, հեծելազորային խոշոր միավորման դեկավարության վարպետություն ե ցուցաբերում:

Լեհական ճակատը ճեղքելու ժամանակ Պարխոմենկոն տիֆով հիվանդ եր և սայլակով եր ման գալիս: Զի նստելու ուժ չուներ: Բայց և այնպես ոի վիզիայի հրամանատարությունը Պարխոմենկոն վեչ վոքի չհանձնեց:

Կոիվների ժամանակ նա միշտ բրիգադներում և գնդերում եր գտնվում: Միայն կովի աեղում պայմաններն ուսումնասիրելով, Պարխոմենկոն դալիս եր

գիվիդիայի շտաբը և ճեռները մեջքին դնելով, ասում էր շտաբի պետին:

— Գրի'ր.

Անկյունից անկյուն անցնելով, նա նոր ոպերատիվ գրաման եր թիւլադրում:

Դուբնո բերդը վերցնելուց առաջ Պարխոմենկոն մանրազնին կերպով ուսումնասիրում եր նրա մատուցները, խրամատները, ամրությունների դիրքը, սպիտակ լեհերի ուժերը: Հետո կանչելով իր բրիգադապետերին և Դուբնոն գրոհելու հրամանը տալով, ճիշտ և պարզ կերպով բացատրեց, թե ով ինչ պետք է անի:

Հունիսի 16-ին Պարխոմենկոյի դիվիդիան գրավեց Դուբնո բերդը:

Սպիտակ լեհերին հետապնդելով՝ Պարխոմենկոյի դիվիդիան, հակառակորդին քայլ առ քայլ հետեւելով, անցավ Բուգ գետը:

Անցնելով Բուգը, 14-րդ ձիավոր դիվիդիան շարունակում եր կովել հակառակորդի հետ:

Անաշխն գրոհով յեղակ գոլուրովսկու գունդը: Գնդի գլուխ անցած՝ թուչում եր Պարխոմենկոն: Յերբ կոխին սկսեց հաջող տարգանալ, Պարխոմենկոն իր համհարզ կրիվոսինի հետ սլացավ դեպի մյուս բրիգադը: Այդ բրիգադին մոտենալիս Պարխոմենկոն նկատեց, վոր գնդերից մեկն սկսել ե նահանջել: Նըրանց հետեւից քայլ առ քայլ լեհական ուլաններն ելին դալիս:

— Կանգնի'ր, — բոռաց Պարխոմենկոն՝ սուրը ճոճելով ։ Յետ դարձի'ր:

Գունդը կանգ առավ: Լեհերը զարմանք կտրած

Քործի անսպասելի չբջադարձից, նույնպես կտնվնեցին:

Սպիտակ-լեհական ուլանների առջեռում, ցեղական նժույգ նստած սրարչավ դաշիս եր լեհական մի ոռոմիստրը: Սուրբ ճոճելով, նա կոչ եր անում ուլաններին գրոհի անցնել: Ուլանները վարանմունքով դես ու դեն ելին նայում: Յերկու ձիավոր շարքեր անշարժ կանգնած ելին իրար դիմաց:

Պարխոմենկոն լուս, աչքերը կկոցելով, բեխը կրծելով, մեկ վայրկյան միայն նայեց սրարչավող ոռոմիստրին: Հետո թքեց, ձին առաջանդակեց և սուրբ չողացնելով սլաշավ ոռոմիստրի վրա: Կարմիր մարտիկներն ու լեհական ուլանները սառած մընացին: Մենամարտն սկսվեց... Լեհական ոռոմիստրը սրամարտական գործը յունկերական սեղանից ուսումնասիրած լինելով՝ ահազին առավելություն ուներ իր հակառակորդի հանդեպ: Պարխոմենկոն միայն իր ֆիզիկական ույժը կարող եր հակառակը և նրան:

Նրանց սբերը զբնվոցով խաչաձեռում ելին իրար: Կարմիր մարտիկները և ուլանները չունչերը պահած հետեւում ելին մենամարտին: Լեհական ոռոմիստրի սուրբ շարունակ չողում եր Պարխոմենկոյի դիմուլերում: Ահա և Պարխոմենկոյի ուսից արյուն սկսեց ծորալ: Բայց հանկարծ Պարխոմենկոն հարմար ըոպէ ընտրելով, հարվածեց ոռոմիստրի պարանոցին: Ըստրելով, հարվածեց ոռոմիստրի պատմագոյն: Դուռմիստրը մեջքի վրա շուր գալով սկսեց կամաց կամաց ձիուց ընկնել:

Կարծես մառախուղում, Պարխոմենկոն տեսավ իր մոռով անցնող ձիերին: Այդ նրա դիմուլեայի մար-

տիկներն եյին, վոր մըրկի պես ոլացան դեպի լեհական ուլանները:

Կախովկայի մոտ Դնեպրն անցնելով, 1920 թվի հոկտեմբերին Պարխոմենկոյի դիմուլեան ամբողջ Առուջին Հեծյալ Բանակի հետ միասին նետվեց բարոն Վրանդելի սպիտակ գվարդիական բանակի թիկունքը: Վոր զրավել եր Հյուսիսային Տավրիան: Ռոժդեստվենսկի դյուղի, Ոտրագայի մոտի կոփիներն Առաջին Հեծյալ Բանակի պատմության մեջ հաղթանակների նոր եջեր են: Պարխոմենկոյի դիմուլեան 1920 թվի նոյեմբերի 14-ին գրավում ե Ղրիմի մայրաքաղաքը՝ Սիբիրերոպոլը: Ղրիմն ազատված ե սպիտակ գվարդիականներից և ինտերվենտներից:

Վրանդելը շարուված ե Սև ծովը: Ուկրաինայում մնացել ե սպիտակ լեհերի վերջին դաշնակիցը—բատկո» Մախնոն իր կուլակային ջոկատներով:


Պարխոմենկոն քչում ու ջարդում ե մախնովցիններին:

Վերջին կոփիներից մեկում, 1921 թվի հունվարի 3-ին, մի սաստիկ ցուրտ յերեկո, Յուստին փոքրիկ քաղաքի շրջանում, Բուլղովկա դյուղի մոտ ընկալ դիմուլեայի փառահեղ պետ Ալեքսանդր Պարխոմենկոն: Նրա ածյունը տարվեց լուգանսկ և այնտեղ փառակոր կերպով թաղվեց:

Պարխոմենկոյի անունը մոռացված չէ: Նա ապրում ե բանվորների ու գյուղացիների սրտում: Նրա անունն այժմ կրում է Կարմրադրոշ հեծելազորային դիմուլեան, վորի հրամանատարն եր նա: Նա կրում է կոմիսարիան պրոլետարական հերոսի այս փառակոր անկական պրոլետարական հերոսի այս փառակոր անունը վորպես մեր հայրենիքի թշնամիների դեմ տա-

րած հաղթանակների խորհրդանշան։ Սուր են Պար-
խոմենկոյանների սքերը։ Պարխոմենկոյանները շա-
լավ են կոտորում, շատ լավ են ծակոտում, դիպուկ
են կրակում, նրանք քաջ ձիեր ունեն։ Նրանք քաղա-
քականապես հրաշալի յեն պատրաստված։

Թող վոչ-վոք չփորձի հարձակվել բանվորա-գյու-
ղացիական արյունով ներկված մեր հայրենիքի սըր-
բազան տերիտորիայի վրա։ Պարխոմենկոյի անվան
հեծյալ դիվիզիայի մարտիկները, հրամանատարները,
քաղացիատողները հղոր բանվորա-գյուղացիակ'ան
կարմիր բանակի հետ միասին յերկրի յերեսից կծն-
ջեն ամեն մի թշնամու։



ՌՈՒԻԴՆԵՎ

Նիկոլայ Ալեքսանդրովիչ

«Խոր կսկիծով եմ Յօնամ քնի. Ռուգ-
նեվի հեռուական մահը մարտիկի փա-
ռափոր դիրքում հականեղափախուրյան
դեմ»

(ԱՏԱԼԻՆ)

Լույսը բացվեց։ Գիշերվա գանդաղկոտությունը
ենդքելով՝ գարնանային արևի առաջին ճառագայթնե-
րը դիպան մառախուղով ծածկված խոնալ գետնին։
Բնությունը կենդանացալ, բայց աղում դեռ անդորր-
մեղմություն ու հանգստություն եր աիրում...

Եեւ հանկարծ հնչեց մի ռաժեղ, վորոտալից հար-
գած։ Հողի, ծխի ու կրակի ոյտըն բարձրացավ գեռ
քնած Խարկովի ծայրամասում։

1918 թվի ապրիլի 9-ին եր : Ոտարերկրյա ոկուս-
պացիոն զորամասերի հրամանատարությունը հրա-
մայել եր Խարկովը պաշտպանողների հետ գործու-
վերջնել, գրավել քաղաքը և չուտով ռկուպացիայի
յենթարկել Դոնբասը :

Ոկուպանտների 21 հետևակ և 3 հեծելաղորա-
յին դիվիզիաներ, ավտորիական 8 հետևակ և 2 հեծե-
լազորային դիվիզիաներ — մոտ 300,000 հիանալի
զինված, խիստ վարժված, սովորած, իմպերիալիս-
տական պատերազմի գործոցն անցած զինվորներ գեր-
մանական ավազակային բուրժուազիայի հրամանով
դրավել ելին խորհրդային Ռէկրախնան :

Ոկուպանտների զորքերը հարձակվեցին անպաշտ-
պան, պատերազմից քայլայված հանրապետության
վրա «դիմավորապես խորհրդային իշխանությունը
տապալելու և հին բուրժուական ուժիմը վերականգ-
նելու համար» (Ստալին) : Ոտարերկրյա հափշտա-
նելու համար» (Ստալին) : Ոտարերկրյա հափշտա-
նելու համար» (Ստալին) :

Ինտերվենտների զորքերի դեմ խորհրդային Ռէ-
կրախնան սկզբում միայն 20000—30000 մարտիկ-
ներ կարող եր դուրս բերել :

— Սոցիալիստական հայրենիքը վտանգի՝ մեջ հ—
ճնշում եր բոլշևիկյան կուսացության կոչ անող
ձայնը : Այդ կոչով հայրենիքի բոլոր լավագույն զա-
վակները շարժվեցին դեպի հավաքակայանները, ցու-
ցակագրվելու կարմիր բանակում և ռազմական ջո-
կատները մանելու :

Բայց Խարկովը դեռևս պաշտպանում ելին մի-
քանի ռազմական ջոկատներ, վորոնց մեջ իրենց արի-

ությամբ և առկունությամբ աչքի եյին ընկնում ըս-
կերներ Վորոչիլովի և Ռուդնեվի ջոկատները :

Հունվարի 9-ի լուսաբացին ոկուպանտների ծանր
հրետանին կրակ բացեց՝ պատրաստելով հետեվակի
գրոհը : Արկերն ավելի ու ավելի հաճախ եյին ընկ-
նում քաղաք :

— Ընկեր հրամանատար, աիլ ոկուպանտները
լուրջ կերպով են կպել մեզ : Ծանր հրետանին և խը-
փում, — խոսեց մարտիկներից մեկը՝ զառնալով դեպի
Ռուդներ, վորը հենվել եր ծառին, վորի յետեկց դի-
տում եր իրեն համար դեռ անորոշ ոկուպանտների
հետևակի տեղաշարժումը :

— Գրոհի յեն պատրաստվում, չենք դիմանա, —
ինքն իրեն մտածեց Ռուդնեվը և լսելի կերպով պա-
տասխանեց .— Այո՛, ուղում են Խարկովը գրավել :

— Այ, յեթե նրանց թնդանոթները մերը լինելին
և գարձյալ լուգանցիների պես յերկու-յերեք ջոկաս
ունենայինք, մենք վոչ մի դեպքում Խարկովը չեյինք
ովհի, — կարծես իր հրամանատարի մտքերը գուշա-
կելով, նկատեց մարտիկը :

— Վոչինչ, մի՛ վհատվիր, այսոր մենք նահան-
ջում ենք, քաղաքներ ենք հանձնում, վորովհետև նրանք
ավելի ուժեղ են, իսկ, այ, վաղը... վաղը մեր ամ-
բողջ ժողովուրդը վոտքի կենի նրանց դեմ, այն ժա-
մանակ ոկուպանտները կհիշեն իրենց այսորվա հետ
հաղթությունների մասին : Համբերություն, համա-
սություն, — ահա թե այժմ ինչ ե հարկավոր մեզ : Մի՛
վհատվիր, ամրացիր, մեր ուրախությունն առջևներս
ե, — պատասխանեց Ռուդնեվը և հեռացավ :

Մարտիկը, վոր դեռ Տուլայում ծառայում եր

Առողջնելի վաշտում և այժմ կամավոր կերպով եր
մտել նրա ջոկատը, նայեց իր հրամանատարի յետե-
վից և դառնալով դեպի իր հարևանը՝ ասաց .

— Հրաշալի տղա յե, խելոք, կարողանում ե հու-
սադրել: Այսպիսի մարդու հետ լալկանություն ա-
նելն ել ամոթ ե:

...Կոփվը բորբոքվում եր. հրանոթային կրակն
աւծեղանում եր. ճարճատում եյին գնդացիրները:

Ռուղնեվը դնում եր շղթայի կողքով. թեթև
կերպով թռչկոտելով առուներով: Նրա ջահել, յե-
ասնդուն դեմքին, վորի գորշանման դույնը ցույց եր
տալիս անհանդիստ անցկացրած մարտական որեր ու
անքուն գիշերներ, ժպիտ եր խաղում: Նա մարտիկ-
ների հետ կատակներ եր անում, ծիծաղում եր, հրա-
պուրում, խրախուսում եր:

Այստեղ, ոտարերկրյա հակատակիների հետ ու-
նեցած տաք կոփվներում Ռուղնելը հանդիպեց զար-
մանալի մարդկանց, վորոնք լի եյին վճռականու-
թյամբ, հմայիչ անվեհերությամբ և հաղթելու յեր-
կաթե կամքով: Լուգանսկի բանովրական ջոկատը,
վոր կովում եր Խարկովի տակ, նրա խիզախությունը
կովի մեջ, կարգապահությունը նման չեյին այն բո-
լորին, ինչ վոր մինչեւ այդ տեսել եր Ռուղնեվը:

Ինքը կողմնակից լինելով կաղմակերպվածու-
թյան ու կարգապահության, ունենալով մարտիկի
զարմանալի անձնական հատկություններ՝ խիզախու-
թյուն, համառություն, յեռանդ և տոկունություն՝
Ռուղնելին անսովոր բավականություն եր զդում, վոր
կովում և «ընկեր լուգանսկցիների» հետ միասին,
կողք-կողքի:

Այդ որից ընդմիջությունը մինչև իր հերոսական մա-
կը, Նիկոլայ Ռուդնեվն իրեն կապեց Լուգանսկի ջո-
կատի հրամանատար, բոլցեիկ, սոցիալիստական հայ-
րենիքի զինված պաշտպանության տաղանդավոր կադ-
մակերպող Կլիմենտ Յեֆրեմովիչ Վորոշիլովի հետ:



...Նիկոլայ Ալեքսանդրովիչ Ռուդնեվը ծնվել է
Տուլայի նահանգի Լյուտորիչէ գյուղում, գյուղական
քահանայի ընտանիքում:

Փոքրիկ Կոլյայի անհոգ մանկությունը մռայլվեց
հոր զաժան վճռով, վորն ուղում եր իր վորդուն կրո-
նական պաշտամունքի արժանավոր սպասավոր տեսնելէ
Կենսուրախ, զգայունակ Կոլյային բերին խեղուկ ու
ցուրտ քարե պատերով հոգեոր դպրոցը:

Բայց սեմինարիստների վայրենի բարքերը, ման-
կավարժների դաժան վերաբերմունքը, անմիտ, մեռ-
խանիկորեն անդիր անելը և սեմինարիստական պայման-
ների նեխած ու փտած մթնոլորտն այնուամենայնիվ
չկարողացան սպանել ջահել Նիկոլայի վառվուն ու
դեպի կյանք ձգտող բնավորությունը: Ռուդնեվի պըր-
պտուն միտքը և հարցասիրությունը չկարողացան
հաշտպել աստվածաբանական գիտությունների ուու-
տինայի հետ: Դեպի կենդանի իրականությունը յե-
ղած բուռն ձգտմանը յելք եր հարկավոր, և Նիկո-
լայը, հակառակ հոր կամքի, հաստատ վճռեց սեմի-
նարիան թողնել և գիմնազիա մտնել: Նա համառ,
նստաջան կերպով, առանց հորից ոգնություն ստա-
նալու, պատրաստվում է գիմնազիայի համար...

Ահա և քննությունը։ Նիկոլայը դերագանց քննությունն ավեց և նրան ուղղակի 6-րդ դասարան ընդունեցին։ Այս հաջողությունից Ռուդնեկի դլուխը չշշմեց։ Դիմոնազիա մտնելով՝ նա այստեղ ևս նույնպիսի լուրջ ձգտում ցուցաբերեց դեպի ուսումը, դեպի դիտելիք ներն ու իր աշխարհայացքն ընդլայնելու գործը։ Նա նույնքան լավ և սովորում, շատ և կարդում և առանձին բավականություն և զգում հասարակական-քաղաքական դիտություններն ուսումնասիրելու մեջ։

Հասարակական և սոցիալ-տնտեսական դիտություններով այսպես հրապուրվելն ել հետո նրան դուրս և բերում հեղափոխական պայքարի ճանապարհ։

Այդ ամենապատասխանառու հեղափոխական հասունացման շրջանում Նիկոլայ Ռուդնեկը մի բախտավոր պատահականությամբ Տուլայում 1913 թվին հանդիպում է հայտնի հեղափոխական, հին բոլցեկի, նշանավոր մարքիստ Գավրիիլ Դավիդովիչ Լինդովին (ընկ. Լինդովը ԽՍՀՄ-ի քաղաքացիական կովի ժամանակ 4-րդ Կարմիր Բանակի քաղաքական կոմիտարն եր և Ուրալյան ռազմաճակատում ընկալ հերոսի մահով)։

Տասնյոթ տարեկան Նիկոլայի հանդիպումն ու մերձեցումը Գավրիիլ Դավիդովիչի հետ խոր, անջնջելի հետք թողեցին Ռուդնեկի կյանքում։ Այդ որից հին բոլցեկիը քայլ առ քայլ, ամուր կերպով, ուշադրությամբ ուղղում եր Նիկոլային դեպի իսկական հեղափոխականների լադերը, դեպի բոլցեկիյան կուսակցության շարքերը։

Վորպիսիք բացառիկ հաճույք և ներքին բավակա-

նություն եյին պատճառում Նիկոլային Գավրիիլ Դավիդովիչի խնամքով ընտրած մարքսիստական գրականության խորացած ընթերցումը կամ խոհուն ուսուցչի հետ ունեցած մտերիմ զրույցները քաղաքական նյութերի մասին։

Նիկոլայը 1915 թվին մտավ համալսարան։ Նա այստեղ բերեց գիմնազիայում ձեռք բերած գիտելիքները և Գավրիիլ Դավիդովիչի չնորհիվ ստացած մարքսիստական դաստիարակությունը։ Նիկոլայն այժմ վոչ միայն սովորում ե, այլև ակտիվ անդամ է հեղափոխական ուսանողական խմբակի և նրա վորոշումները կատարող գործունյա և յեւանդուն անդամներից մեկն ե։

Բայց համալսարանում սովորելը Ռուդնեկին վրակված չեր։ 1916 թվին նրան կանչեցին ցարական բանակը և, փորպես ուսանողի, ուղարկեցին Մոսկվայի Ալեքսանդրյան զինվորական դպրոցին կից գտնվող ուրապորչչիկների արագացրած դասընթացները։

Դասընթացներն ավարտելուց հետո Նիկոլայ Ռուդնեկը սպայության կոչվեց և նշանակվեց Տուլա՝ 30-րդ հետեակ գունդը։

Գալով գունդը՝ Ռուդնեկին այնտեղ նպաստավոր պայմաններ գտավ աշխատանքի համար։ Ուշադրությամբ դիտելով իր սուրադըրյալ զինվորներին, վորոնց ճնշող մասը հասակն առած, կիսագրագետ մարդիկ եյին, Ռուդնեկը նրանց նկատմամբ ունեցած իւրավ վերաբերմունքով քայլ առ քայլ կոտրեց այն անբարյացակամ վերաբերմունքը, վոր զինվորները դադանի կերպով տածում եյին դեպի սպաները։

— Սպայի, բայց բոլորովին վոչ այնպես, ինչ-

ուես մյուսներն են, — առում եյին զինվորնեցն թուղ-
նեվի մասին, — վարվող ե, կոպիտ չե, չի դուռըմ,
զինվորներին չի հայհոյում:

Զինվորներն սպա Ռուդնեվին առանձնապես սի-
րում եյին, վորովհետև նա «մտերիմ կերպով» դրու-
թում եր իրենց հետ ընտանիքի, գյուղի, տարվա բեր-
քի մասին: Ռուդնելի հասարակ, հարկանալի խոսքերն
ըմբռնելի եյին ու անսովոր:

Ըմբռնելի եյին, վորովհետև այնքան ճշմարիտ
եյին, վոր վիճել ել չեր կարելի: Անսովոր եյին նրա
համար, վոր յեթե Ռուդնելը խոսում եր թափավորի
մասին, այնպես եր ստացվում, վոր կարծես նրա դեմ
եր խոսում: Յեթե պատերազմի մասին եր խոսում,
դուրս եր գալիս, վոր պետք է կովել վոչ թե գերմա-
նացիների, այլ ուրիշ թշնամիների հետ:

... Պայթեց փետրվարյան հեղափոխությունը:

Այդ որերին Նիկոլայ Ռուդնեվն անձանաչելի յեր:
Եռուն հեղափոխական դործունեյության մեջ ծա-
փալում ե մասսավիկի և կազմակերպչի նրա տա-
կանդը: Ռուդնելի շուրջը հավաքվեց հեղափոխակա-
նորեն տրամադրված զինվորների մի ամուր կոլեկտիվ,
վորոնց վրա նա հենվում ե իր աշխատանքում:

Ռուդնեվն ամբողջ ժամանակն անց ե կացնում
զինվորական մասսաների մեջ: Նա յելույթներ ե ու-
նենում միտինդներում, բացատրում, հրավիրում ե
կազմակերպվել և զինվորների կոմիտեներ ե ստեղ-
ծում:

Այդ որից սկսած զնդին վերաբերող վոչ մի հարց
առանց Ռուդնեվի չեյին վճռում: Նրա խոսքը լուսմ ե-
յին, նրա կարծիքն որենք եր: Դեպի Ռուդնեվն յեղած

անսահման վստահությունը և նրա բարձր քաղաքա-
կան հեղինակությունն արտահայտեց ամբողջ դունդը՝
նրան գնդի հրամանատար ընտրելով: Դունդը
պատրաստ եր իր նոր հրամանատարի առաջին իսկ
հրամանով դուրս գալ հեղափոխությունը պաշտպա-
նելու:

Ռուդնեվի լարված և մեծ հեղափոխական աշխա-
տանքը միայն գնդի ըրջանակներով չեր սահմանա-
փակվում: Իր հին բարեկամ-դաստիարակ Լինդովի
հետ միասին նա յեռանդով աշխատում եր Տուլայում
ՌՄԴԿ զինվորական կազմակերպությունն ստեղծել:

Տուլայի ՌՄԴԿ զինվորական կազմակերպու-
թյունը բաղկացած եր բոլշևիկներից և մենշևիկներից:

Բոլշևիկների յեռուն, անխոնջ աշխատանքը,
զինվորական կազմակերպության ղեկավարներ Լին-
դովի և Ռուդնեվի բուռն տենչն ու սկզբունքայնու-
թյունը մենշևիկների քեֆին չեր գալիս: Յուրաքան-
չյուր որը նրանց համար հիսաթափություն եր բե-
ռում: Տուլայի կայազորի հիմնական մասսան բոլշ-
ևիկյան լողունգներին եր հարում: Լինդովի և Ռուդ-
նեվի ժողովրդականությունը զինվորների ըրջանում
աճում եր ամեն որ, նրանց ճառելը լսում եյին մեծ
աւշադրությամբ: Յերբ բոլշևիկների հաջողություն-
ներից սրանեղած մենշևիկները փորձեցին իրենց ձեռ-
քն առնել զինվորական կազմակերպությունը, իսկա-
կերպով նրանց դեմ դուրս յեկալ Ռուդնեվը: Նրան
պաշտպանեց կազմակերպությունը և մենշևիկները
պարտվեցին:

Տուլայի զինվորների ըրջանում բոլշևիկների աշ-
խատանքի արտասովոր թափը հայտնի դարձավ ժա-

մանակավոր կառավարությանը : Բոլցևիկը գնդի չը
բաժանատա՞ր ե :

Ժամանակավոր կառավարությունը վճռում է
կազմալուծել գունդը : Բայց ինչպես . զինվորները
խոռվություն կբարձրացնեն : Զերբակալել բոլցևիկ
հրամանատար Ռուդնեխն : Ավելի վատ կլինի : Զին-
վորները նրան չեն հանձնի : Այդ ժամանակ վճռեցին
ամբողջ գունդն «ոպերատիվ» կարգով փոխադրել
Խարկով, հեռու Մոսկվայից, հուսալով, վոր այստեղ
կինորները «խելքի կզան» :

Բայց ժամանակավոր կառավարությունը սխալ-
վեց : Հենց վոր գունդը Ռուդնեվի գլխավորությամբ
Խարկով հասավ, նա իր միջից 16 պատղամավոր ընտ-
րեց՝ Խարկովի խորհրդին մասնակցելու : Գնդի պատ-
ղամավորները խորհրդից յեկան, իրենց լիազորագրերը
ներկայացրին և ամենից առաջ հարցրին.

— Իսկ այստեղ վո՞րտեղ և ձեր բոլցևիկյան
ֆրակցիան :

— Այստեղ, այ, գեղի աջ : Իսկ դուք ի՞նչ գոր-
ծով եք գնում նրանց մոտ :

— Ի՞նչպես թե ինչ գործով : Գնդի հրահանդն ենք
կատարում : Զինվորները խիստ հրամայել են՝ բոլցե-
միկները Խորհուրդներում ամենաառաջին մարդիկն
են : Մտերմացեք նրանց հետ, լսեցեք ու պաշտպանե-
ցեք նրանց : Այ, դրա համար ել այստեղ ենք գնում :

Խարկովում շատ կուսակցական բջիջներում և
կայազրի մասերում Ռուդնեվը շուտով հայտնի
դարձավ վորպես անխոնջ, յեռանդուն, հրաշալի բոլ-
շևիկ : Ռուդնեվը մեծ, զանազան բնույթի աշխատանք
եր տանում — կուսակցական բջիջներ եր կազմակեր-

պում, ուղամաճակատ եր գնում վորպես պատվիրակ,
յելույթներ եր ունենում միտինգներում :

Մոռանալով իր մասին, իր անձնական գործերի
մասին՝ Ռուդնեվն ամբողջովին թաղվում եր կուսակ-
ցական աշխատանքի մեջ : Կուշտ չեր քնում, մոռա-
նում եր ուտելու մասին, բայց իրեն հանձնած գործը
չեր թողնում, մինչև չեր վերջացնում :

Նրա բացառիկ աղնվությունը, կարելցող սիրուը,
անկեղծությունը հարգանք ելին առաջ բերում գեպի
նույնիսկ այն գնդի ուեակցիոն սպաների շրջա-
նում, վորտեղ «ծառայում եր Ռուդնեվը :

Եերբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան Մեծ հեղա-
փոխությունը, 30-րդ գնդի զինվորները Ռուդնեվի
գլխավորությամբ և նրա հրամանատարությամբ նը-
պաստեցին խորհրդային իշխանություն նվաճելուն և
հաստատելուն Խարկովում, իսկ հետո մեծ մասով
մտան Ռուդնեվի կարմիր-դվարդիական ջոկատը :

... Ոկուպանտները ձեղքելով հասան կայարանին
և գրավեցին այն : Այսուհետեւ դիմադրելը վտանգա-
վոր ու անժիտ եր դառնում : Ոկուպանտների զորքերի
վոր ու անժիտ եր դառնում : Ոկուպանտների զորքերի
վոր ու անժիտ եր դառնում : Ոկուպանտների զորքերի
վոր ու անժիտ եր դառնում : Կարմիր-դվարդիական շատ ջոկատներ շրջա-
նական :

Խարկովից վերջինը հեռացավ ընկեր Վորոշիլովի

Հաւգանսկի ջոկատը : Նա ճեղքեց, դուրս յեկավ ոկու-
պանտների շրջապատումից և դիշերային հոգնեցող
յերթերից հետո վերադարձավ Լուգանսկ :

Խարկովի կոխվների ժամանակ սկսեցին Լուգան-
սկի ջոկատի շուրջը հավաքվել բոլոր նրանք, ովքեր
տոկուն եյին, կարգապահության վարժված, հեղա-
փոխության գործին նվիրված : Հենց այդ որերին ել
Լուգանսկի մարտիկների ընտանիքը մտավ նաև Նի-
կոլայ Ռուդնեվը :

1918 թվի ապրիլի վերջերին Ռուգակովո—Լու-
գանսկի շրջանում հավաքվեցին մեծ թվով կարմիր
ջոկատներ : Հենց այնտեղ ել նորերը կազմվեցին,
բայց նրանք բոլորը միացած չեյին : Բացակայում եր
միասնական հրամանատարությունը : Այս քառոսում,
այս խառնաշխոթության մեջ միայն մեկ բան պարզ
էր. գերմանական կանոնավոր դիվիզիաների առաջ
ջոկատները չեյին դիմանա : Այս ջոկատներից ճ-րդ
բանակ կազմելն այնքան ել հեշտ չկատարվեց : Վո-
րոշիլովը, վոր բանակի հրամանատար եր նշանակված
և Ռուգանեվ՝ բանակի շտարի պետը, գերմարդկային
ջանքերով կարողացան կարդ սահմանել, վորովհետև
ջոկատների առանձին հրամանատարների կողմից
սուլդակի դիմադրության եյին հանդիպում :

Ընկեր Վորոշիլովը Ռուգանեվին հրամայեց բոլոր
չոկատների, նրանց քանակի, սպառազինման, հան-
դերձանքի, մթերքի հաշիվը կազմել : Այս ամենապա-
տասխանատու հանձնարարությունն Ռուգանեվը կա-
տարեց առանց ուժեր ու կյանք ինտյելու : Հաշվառ-
ման դժվարությունն այն եր, վոր կարգապահու-
թյուն չկար. կարմիր-գվարդիականի նշաններով քո-

դարկիված ջոկատների մեջ եյին մտնում անարխիստ-
ներ, յերբեմն ուղղակի ժուլիկներ, վորոնք ջոկատի
ամբողջ ունեցվածքն համարում եյին իրենց անձնա-
կանը :

Ահա որինակ, դրադ Ալեքսեյ Տոլստոյն ինչպես և
նկարագրում իր «Հաց» վեպում այդ ժամանակաշր-
ջանի տեսարաններից մեկը :

«Ճանապարհներին՝ պերոնի վրա մարդիկ խժվժում
եյին մրջյունների պես, գոռում եյին մի քանի հա-
րյուր կոլորդներ : Զեռքները թափահարելով՝ նրանց
չեղ, զղայնացած շրջանը շրջապատել եր մի տաքա-
ցած խմբակ, վորտեղ ամենից գլխավոր բանն եր կա-
տարվում .— «Զերեպախիա» զրահակրի յերեք նավաս-
տիներ և «Բուրյա» ջոկատի մեկ տասնյակ անար-
խիստներ ծեծելով քաշ եյին տալիս—ինչպես յերեսում
ե գնդակահարելու եյին տանում— գունատ, կարմը-
րած աչքերով, ասորական զզզզած մորուքով ժողկոմ
Մեժինին և Կոլյա Ռուգանեվին . նրա ճակատի չանգը-
ռած յերեք վերքերից արյուն եր թափվում, լայն
դիմնաստյորկայի ոճիքը պատռած եր, գեմքն այլան-
դակված . նա աշխատում եր աղատվել և նույնպես
լատաղած գոռում եր :

Ռուգանեվ ճանապարհ բանալով, այդ խմբի մեջ
ընկան Վորոշիլովը, Պարխումենկոն, Լուկաշը, Շչա-
գենկոն և հրամանատարներից նրանք, ովքեր հասան
նրանց յետևից :

— Ի՞՞նչ ե պատահել, — բարձր ձայնով կանչեց
Վորոշիլովը . . . Յեկ նավաստիների ու անարխիստների
կրծքին գեմ առան նաղանների փողերը :

— Ի՞՞նչ ե պատահել, — դուռաց Լուկաշը, շրբ-

չապատող ամբոխի մեջ աչքերով եր ջոկատից վորեե
յեկին փնտռելով...

Այս բոլորը կատարվեց հանկարծ, կտրուկ, վըճ-
ռականորեն։ Նավաստիներն Ռուդնելին և Մեժինին
բաց թողին։ Անարխիստներից մեկը— փոքրիկ, մը-
կանոտ, կրակի պես շեկ—իրեն զցեց ամբոխի մեջ,
բայց այնտեղ յերկար մազավորի հետ նրա ոճիքից
բռնեց ահագին Բոկունը— թափահարեց և կրկին հը-
լեց ըրջանը...

Մեժինը դառը թուքը կլանելով, ասաց Վորոշի-
լովին։

— Մենք «Զերեպախայից» սկսեցինք. վորոշել
եյինք ստուգել բանակի արժեքները պարունակող
սեյֆը... Իսկույն հրամանատարության մեկ մասի
թշնամական տրամադրությունը յերեաց։ Այս յերեքը
մեզ նույնիսկ ատրճանակներով սպառնացին՝ թույլ
չտալով սեյֆը բանալ... Բանն այս ե. «Զերեպախայից»
մոտ և հենց վագոնում, այ, սրանք եյին սրանք,— նա
չույց տվեց անարխիստներին։ — Նրանք պարզ կերպով
ագիտացիս եյին մղում... Տրամադրությունը բարձ-
րանում եր... Մենք պնդում եյինք բանալու վրա...
Մեղ վագոնից դուրս քաշեցին, գնդակահարել սպառ-
նալով...»

Ահա թե Ռուդնելին ինչ պայմաններում եր վի-
ճակված կատարել 5-րդ կարմիր բանակն ստեղծելու
ուազմական հրամանը։



...Ապրիլի 28-ի մոտերքը, յերբ ընկ. Վորոշիլովի
բանակի 80 եշելոնները մոտենում եյին Միլերովով

կայարանին, դրությունը չափազանց ծանր եր։ Ոկու-
պանտները գրավել եյին Զերտկովո կայարանը,
կտրելով ճանապարհը դեպի հյուսիս։ Դեպի Ռուսով
տանող ճանապարհը նույնպես գրավված եր գերմա-
նական զորքերով։ Ցարիցինի ճանապարհը հարվածի
տակ եյին պահում սպիտակ կաղակները։ 5-րդ բա-
նակը թշնամիների ողակում եր գտնվում։ Ոկուպանտ-
ների հրետանին ոմբակնծում եր ավանը, իսկ ինք-
նաթիւնները կայարանի վրա եյին ոռոմբեր գցում։
Կամենսնկայա կայարանից 18 կիլոմետրի վրա, Գուն-
դարովսկայա կայարանում, ընկած եր սպիտակ կազա-
կության հակահեղափոխական ոջախը— գեներալ Գու-
սելչէկովի ուազմակայանը։ Գուսելչէկովը, վորին
պաշտպանում եյին ոկուպանտները, հարված եր պատ-
րաստում Բելայա կալիտվայի վրա։

Ընկեր Վորոշիլովն այս բարդ պայմաններում
հաստատ վճռել եր Լիխայայի վրայով ճեղքել անցնել
Ցարիցին, նախաձեռնությունն իր ձեռքն առնել և
շեշտակի կերպով խփելով Գունդարովսկայա ստանի-
ցային, յետ շպրտել սպիտակ կաղակներին և եշելոն-
ներն անցկացնել Կամենսնկայայի վրայով։

Կայարան հավաքվեց 5-րդ բանակի ղեկավար
կազմը։ Քննարկում եյին այն հարցը, թե գրանից հե-
տո ի՞նչ պետք ե անել։

«Կոլյա Ռուդնելի, — գրում ե Ա. Տոլստոյը—կո-
պերը ցած գցած, բերանը բացած, ջանք անելով լլ-
սում եր. նրա պատանեկական դեմքը հոգնածության
քողով եր ծածկված... Ուրիշները, մահու չափ հած,
արեից այրված, նստած եյին, վորը ձեռքով

աչքերը ծածկած, վորը դլուխը բոռնցքներին հենած: Պարիստնենկոն տոմս եր գրում. բեկերը բոնած, մատով խփելով, այդ տոմսը դցեց կոլյա Ռուլնելին: Նա կարդաց՝ «Հույս դիր կլիմի վրա...» և ժպատք բանալով սպիտակ ատամները:

— Ճանապարհը դեպի հյուսիս կտրված է. ոխակ անել — ճեղքելով լիսկի անցնել — անմտություն ե, — հուզված ասում եր Մեժինը՝ մորուքը վորոշիլովի կողմը ձգելով: Ճանապարհը լիսայայի վրայով, ինչպես յերեռում ե, նույնակես կտրված է: Միակ ճանապարհը մնում է դեպի արևելք լիսայայի վրայով — դեպի Յարիցին: Բայց կարո՞ղ ենք յերաշխամորել, վոր գերմանացիները լիսայայի վրայով մեղթույլ կտան անցնել, մեղ համար արյունոտ բաղանիք չեն սարքի: Վոչ, յերաշխավորել չի կարելի: Յեվ յեթե նույնիսկ կարողանանք բոլոր եշելոններն անցկացնել լիսայայի վրայով, մենք պետք ե յերկու հարյուր վերստ անցնենք դեպի Յարիցին՝ ապաստամբած կազակության միջով: Մենք կարո՞ղ ենք տասնհինգ հազար կին, յերեխա ու բանվոր պատերազմի պատահականություններին յենթարկել: Վոչ. չենք կարող... Յեղակացություն...

— Հա՞ր, յեզրակացությո՞ւն, — ցնցվելով խոսեց Դոլյա Ռուդնեկը:

— Յեղակացություն. — մենք տոպրակի մեջ ենք... Մենք ծանրաբեռնված ենք անմարտունակ տարրերով... Մարտական դորամասերը դեռ չափապանց անկարգապահ են... Այդ դրությամբ մենք չենք կարող ճեղքել վոչ դեպի հարավ, վոչ դեպի հյուսիս, վոչ դեպի Յարիցին... պետք ե հիշել, վոր Բրեստի

պայմանագրի համաձայն. գերմանացիները չպետք ե դրավեն Դոնեցի շրջանը: Յեթե մենք մնանք այստեղ և նրանց ձեռք չտանք, ուրեմն ոկուպանտներն ել հիմք չեն ունենա մեղ ձեռք տալու... Յերեք-չորս շաբաթում մենք բանակը կարգի կրերենք, մեր ուժերը կժողովենք, կվարժեցնենք կարգապահության, և այն ժամանակ կկարողանանք հարձակման անցնել — ձեռաց, առանց վաթսուն եշելոն կոշմարային ավելակշռի... Յես առաջարկում եմ մնալ Միլլերովոյում...

Նա դարձավ դեպի Արտյոմը, և սա ծանր կերպով դլուխը շարժեց: Խոժոռած Բախվալովն առանց նայելու պատասխանեց. «Այո, ուրիշ յելք չկա»: Պարխոմենկոն խոժոռավեց, բեկերը կրծոտեց: Կոլյա Ռուդնեկն ուսերը թոթվեց, կարծես մարմինը քոր եր դալիս:

Վորոշիլովը քիվի հագնված, թարմ, կարմիր, խաժ աչքերով ժպտալով — ինչպես միշտ, կարծես առահաբար ներս եր ծծում բառերն ու տպավորությունները:

— Կարո՞ղ եմ, — նա ձեռքը մեկնեց Արտյոմին, — նա կրկին ծանր կերպով գլխով արագ: — յես համաձայն եմ ընկեր Մեժինի հետ. բանակը ցրել չի կարելի... ջոկատները պետք ե միացնել, կարգապահության վարժեցնել, — նա վերկացավ, կարճ շարժումով ուղղեց ուսի փոկերը, — բայց յես համաձայն չեմ, վոր այդ պետք ե Միլլերովոյում անել: Ոկուպանտներն ավաղակություն են անում Ռուկախնայում, առաջակառնություն կանեն նաև Դոնի վրա: Նրանք մեղ այստեղ հանդիսատ չեն թողնի...

Նրա ձեռքը կախվեց ողում: Յերկաթուղու

կայարանի մեծ պատուհանների յետևում պայմանավորեց, ջարդված ապակինները ցած թափվեցին: Թըփելը գործում եյին փախչողների վոտները... Գոռում եյին «Յերկուսին... Հիվանդապահներ... Նայիր, նայիր, ու ի յե թոշում... Մտեք վագոնի տակ...»: Յեզնորից ինքնաթիւուց ոռումք ընկալ... Կրի, ծիսի, կը-տորտանքի սյունը շեղակի ներս թուավ պատուհանից ու թափվեց սեղանի շուրջը նստածների վրա: Արտյո-մը ծիծաղեց, ափով սրբեց մերկ դանդը. Բախվալովը դաժան կերպով շրթունքը դուրս ցցեց՝ նայերով պա-տուհանի կողմը: Պարխոսենկոն բաս ձայնով ասաց.

— Յեթե կտրին ընկներ, շիւա-փլավ կդառնա-յինք... Վորոշիլովը ձգվեց դեպի թղթերի վրա ըն-կած գլխարկը, ամուր ծածկեց:

— Տեսա՞ք նրանք ինչպես են մեզ հանդիսատ թող-նում: Ընկերներ, մեր սրբազնն ինդիրն ե՝ պահ-պահնել բանակը, պահպահնել ամբողջ դույքը, պահ-պահնել մեզ վստահած դաղթականներին: Ճանապարհը մեկ եղեղի Յարիցին... Ճեղքելով կանցնենք մեկ ամիս, յերեք ամիս: Ճանապարհին կազմվենք, կռիվ-ներում կամրանանք... Մենք Յարիցին պետք ե գնանք մարտական բանակով... Յեզ թող Տրոցկին պնդի մեր գինաթափման վրա...

— Զինաթափում— նորից հարցրեց Արտյոմը՝ կարմբատակելով:

— Այո՛... Տրոցկին հրամայել ե գլխավոր շտա-րին՝ զինաթափել ուկրաինական բոլոր բանակներն ու ջոկատները, վորոնք անցնում են Վելիկոուսիայի սահմանը, վորպես թե գերմանացիների հետի պայ-մանադիրը կատարած լինելու համար: Զե՞մ հավա-

տում: Տրոցկին մեզ պարտիզանական բանդիտներ և համարում... Տրոցկու պահանջը համարում եմ մեծ սխալ...

— Դավաճանություն, — բա ձայնով վրա քերեց Պարխոսենկոն:

— Հեղափոխությունը մեկ ե (Վորոշիլովի դեմքը բոնկվեց): Մենք մեկ թշնամի ունենք, մեկ ուզմա-ճակատ, մեկ ստրատեգիա— Դոնի վրա, Ուկրաինա-յում, Վելիկոուսիայում... Այժմ այստեղ, Միլերո-վոյում գերմանացիների հետ կրվելը տեղական և մասնավոր խնդիր ե: Ընդհանուր հեղափոխական բնույթի խնդիրն առաջ ե տարվում Յարիցինում... Յեթե սպիտակ կազմկությունը Յարիցիների տիրի, Վոլգան կմնա հակահեղափոխականների ձեռքում, տմբողջ հյուսիսն առանց հացի կմնա... Յեղակա-ցությունը հասկանալի յե... Քվեարկության եմ զը-նում հետեւյալ առաջարկը.— անմիջապես բոլոր եշ-լոններն ուղղել դեպի Յարիցին և ինչ հանդամանք-ներում ել լինի, մեր բանակը չցրել և չզինաթա-փել:

Կամբենսկայայի վրայով անցնելով՝ եշելոնները կանգ առան Լիխայա կայարանում: Առջևում անցքը վակ, կամուրջը պայմանական է, նրան կարգի բերելը միքանի որ կտեի: Մայիսի 2-ին մոտ այնքան եշելոն-ներ կուտակվեցին, վոր բոլոր ճանապարհները փակ-վեցին: Խցան գոյացավ: Միաժամանակ Զվերելո կա-յարանի շրջանն եր բերված գերմանական զորքերի ա-հագին քանակություն, վորոնք պատրաստվում եյին 5-րդ բանակի ճանապարհը կտրել: Եշելոնների շարժ-ման ուշանալը 5-րդ բանակի հրամանատարության

ստիպեց համապարտ պաշտպանություն կազմակերպ պել։ Ընկեր Վորովչիլովը Լիխայա կայարանի պաշտպանությունը և այն տեղ կարդ պահելը հանձնեց Ռուբեն նեվին։

Զնայած Ռուդնեվի ձեռք առած հերոսական միջոցներին՝ կայարանում կատարյալ քառս եր տիրում։

Յուրաքանչյուրն աշխատում եր վորքան կարելի յե շուտ դուրս պրծնել եշելոնների և վագոնների ստեղծած թակարդից։ Ամեն մեկն ուզում եր իր եշելոնն ուղարկել կայարանից։ Վորակեսղի կարելի լիներ մեկ եշելոն առաջ քշել Յարիցինի դիմք, պետք և մի ուրիշը յետ քաշվեր։ Յերբ եշելոնը յետ եյին մղում, աղմուկ, աղաղակ, սպանալիքներ եյին բարձրանում, նոնակներ եյին ճոճում։ Վոչ մի բացատրություն ու հորդուանք չեր ողնում։ Ռուդնեվն ստիլված եր լինում գործել միայն ուժով, վճռականությամբ ու համարձակությամբ։

Ահա թե Ա. Տուստոյն ինչպես և նկարադրում այդ ծանր որվա վերջը։

«... Հետևակ ու ձիավոր ոկուպանտները, թվում եր, ամեն կողմից եյին ճզմում։ Նրանց թնդանոթները մոնչում եյին ամբողջ հորիզոնի վրա։ Ցած եյին անցնում ողանավերը։ Ամբողջ տափաստանը յեռում եր պայթուններից, կարծես ինքը յերկիրն եր պատովել ու փոշի յեր ժայթքում։ Փոշով ու ծխով եր պատվել պղնձագույն արեգակը։

Կայարանում այրվում եյին վագոնները, պայթում եյին պլատֆորմներն արկերի հետ միասին։ Ճանապարհները ծածկված եյին ծխացող կտորներով, անկարդ կերպով թափթփալած եյին դիակները, սողում,

գոռում եյին վիրավորները։ Վիրավոր շողեքարչերի կողքերից շողի յեր թափվում, շատերն ել շուռ եյին յեկել՝ անիմները դեպի վեր։ Ուժեղացող հրետանային կրակը ցագուցրիվ եր անում այն ամենը, վոր դեռ անձնամիսների յեր մնացել։

Այս աներեվակայելի պայմաններում դեռ շարունակում եյին յետ քաշվել՝ հետները վերցնելով կայարանից ու ճահճից վրնդվող մարդկանց։ Վորոշիլովը, Արտյոմը, Կոլյա Ռուդնեվը, Զուգայն իրենց բրիգադով, — լարվածությամբ ու հոգնածությունից խլացած, շշմած, այս որերում վաղուց անցած կյանքի սահմանը, միայն քաջությամբ ու վճռականությամբ եյին պայքարում խուճապի դեմ, անում եյին այն, ինչ վոր դեռ հնարավոր եր այս դժոխքում՝ մարդկանց հավաքել վերջին եշելոնները և դուրս բերել շարիցինյան դիմք։ Զարդված վագոնները և վիրավոր շողեքարչերը պատռում եյին ռումբեռով։

Բլուրներից, ուր դեռ վառվում եյին ջրաղացները, գեպի լիխայա տանող բոլոր ճանապարհներին նահանգող ձիավորներ եյին սլանում՝ խմբերով ու մենավոր։ Ծող ձիավորներ եյին սլանում՝ խմբերով ու մենավոր։ Թնդանոթային ձիերը սլանում եյին առանց թնդանոթների... Ողում կրակելով, անկանոն խմբերով նահանջում եյին ջոկատները։ Նրանք հանդիպում եյին Արտյոմին, վոր փորձում եր կանգնեցնել նրանց։ Նա ձիով եր, ամբողջովին մրի մեջ, թաց, սարսափելի, պատռտված գիմնաստյորկայով։ Նա սպառնում, ձիու վրայից խրխռացնում եր, նրա արյունով լցված աչքերը գնդացրից ավելի սարսափելի եյին թվում։ Մարդիկ կանգ եյին առնում, և հաջողվում եր նրանց յետ ուղարկել... Բայց արդեն ամբողջ ճակատն շտապ

կերպով նահանջում եր, հրապուրելով նրանց, սվեր
կովի եյլն վերադառնում...»

«... Կլմենտ Յեֆրեմովիչը, — զոռացին կայա-
րանի պատուհանից :

Կոյսա Ռուդնեվը սկսոնց բարձրացավ, մոտե-
ցավ ձիավորին, մեկ րոպէ ճակատը կացրեց նրա ծըն-
կանը :

— Իսկ յես զանգահարում եմ ամբողջ գծում...
Զիավորներ ուղարկեցի փնտուելու...

— Կամենսկայան մենք հանձնեցինք, — ասաց Վո-
լուշիլովը, — բոլոր զորամասերը հեռացված են չփու-
մից : Իսկ քեզ մոտ ի՞նչ լավ բան կա :

— Տասնվեց եշելոն ե մնացել... Մենք մինչև գի-
շեր կվերջացնենք : (Ճանապարհներին նորից պայթե-
ցին) : Դե, շարունակ մտածում եմ, թե ոկուրանտներն
ինչպես չեն ամաչում : Լավ, սրիկաներ, գիտեն, դիտ-
մամբ են կրակում խաղաղ ազգաբնակության վրա...
(նորից պայթյուն) : Գաղթականներ... Այ քեզ խու-
ժապային ժողովուրդ : Հասկանո՞ւմ ես, Կլմենտ Յեֆ-
րեմովիչ, հինգ հազար մարդ ե ապաստանել ճահիճ-
ները...

— Վոչ վոքի չի կարելի թողնել... վերցրու բո-
լորին...

— Հասկանո՞ւմ ես, գնդացիրներ չկան... Ու-
զում եմ ճահիճից գնդացիրներով վախեցնելով գուրս
բերել...

— Ես քեզ յերկու հատ կտամ :

— Ա՛յ, չնորհակալ եմ...

Ռուդնեվը հանկարծ կնճռուեց օրված քեթը,

բավ ականջ դնելով, վաղեց, պատուհանով ներս մը-
տավ հեռախոսի մոտ...»

«Լիխայա կայարանի մոտ մեծ կովի հետեւանքով
մեր ջոկատները, — գրում ե ընկեր Վորոշիլովը, — խու-
ճապահար փախան թելայայի ուղղությամբ՝ հանդի-
պելով ապատամբած կաղակներին և նրանց գնդակնե-
րին» : Եել ահա այժմ վերջինը մոտենալով թելայա
Կովիտվային՝ ընկերներ Վորոշիլովը, Ռուդներ, Պար-
խոմենկոն և Արտյոմը պարզ պատկերացնում եյին,
թե ինչ տրամադրություն ունեն այս ջոկատները, վո-
րոնք անկարդ վիճակում նահանջում են Լիխայայից :
Խուճապային տրամադրություն յերեաց նույնիսկ ջո-
կատների հրամանատարների մեջ : Զանագան կրաս-
նովսկիական ու տրոցկիստական մութ տարրեր աշ-
խատելով քայքայել մարտիկների շարքերը, անհեթեթ
լուրեր եյին տարածում : Մատնիչներն ու խուճապա-
րարները պահանջում եյին թողնել եշելոնները և ոազ-
մերթային կարգով գնալ Յարինցին :

Հասնելով թելայա Կալիտվա՝ ընկեր Վորոշիլովը
Հրամանատարների ժողով հրավիրեց : Հենվելով ընկեր-
ներ Ռուդների, Պարխոմենկոյի, Արտյոմի պաշտպա-
հության վրա՝ ընկեր Վորոշիլովը խիստ հակահար-
ված տվեց խուճապարարներին :

— Հարյուրավոր շոգեքարշեր ու հազարավոր վա-
դոններ այդպիսի թանգարին գույքը տալ թշնամո՞ւն :
Վո՞չ մի դեպքում :

— Վո՞չ մի մեխ սպիտակ կաղակներին :

— Թույլ չտալ, վոր սպիտակ սողունները մեզ
լսեղեն :

— Կատարյալ մարտական կարգով խիել-անցնել
ֆարիցին :

Բանակի հրամանատարի կամքի ուժը, նրա խոր
համոզմունքը, դժվարությունները վերացնելու ջերմ
կոչը և բարեկամների յեռանդադին պաշտանությունը
վերացրին թուլությունը, վհատությունը և խու-
ճապայնությունը :



Հունիսի սկզբին 5-րդ բանակի առաջին եշելոն-
ները մոտեցան Դոնին : Գետի վրայի կամուրջն ավեր-
ված եր ցարիցինյան քաղսորհրդի այն ժամանակ-
վա նախադահ տրոցկիստ, հետադայում մերկացված
ժողովրդի թշնամի Մինինի ցուցումով : Կամրջի վե-
րականդնումը պահանջում եր շատ ժամանակ, բոլոր
ուժերի լարում և եշելոնների պաշտպանման կազմա-
կերպում : Խուճապարարները նորից գլուխ բարձրաց-
րին : Նորից լավեցին այն դավաճանական խոսքերը,
թե՝ պետք ե թողնել եշելոնները և Դոնով փրկվել
ով ինչպես կարող ե :

Բայց ընկեր Վորոշիլովն այստեղ ևս վճռեց չը-
լքել եշելոնները և կամուրջը կառուցել՝ լավ գիտենա-
լով, վոր դրա վրա մեկ ամսից ավելի կդնա:

Ընկեր Վորոշիլովի այս վորոշումն ակտիվ կեր-
ոլով պաշտպանեց նաև Ռուդնեվը : Նա տոկուն կեր-
ով, առանց հոգնելու ահապին բացատրական աշխա-
տանք և տանում մարտիկների շրջանում, մերկաց-
նում և կազմալուծողներին, հանդստացնում և տաք
գլուխները : Ընկեր Վորոշիլովի, Ռուդնեվի և մյուս-

ների բացատրական աշխատանքն իր գործը ունեավ, —
կազմալուծողներն որեցոր պակասում եյին :

Կամրջի կառուցումը վերջացավ 1918 թվի հունի-
սի 30-ին : Հուլիսի առաջին որերին աղատվելով սպի-
տակ կազմակերպի հանկարծակի հարձակումներից՝ 5-րդ
բանակն անցավ Դոնի ձախ ափը :

Վերջացնելով իր լեգենդային անցումը՝ ընկեր
Վորոշիլովի բանակը հասակ իր նպատակին—Ցարի-
ցինին :

Այստեղ նրան սպասում եր ընկեր Ստալինը :



Ընկեր Ստալինը Ցարիցին եր ժամանել 1918 թվի
հունիսի 6-ին : Նա կուսակցության ԿԿ-ից արտակարգ
վագորություններ ուներ վորպես ընդհանուր ղեկա-
վար «մթերման գործի իրավասությունի հարավում» :
Այդ որերին պրոլետարական հեղափոխությունը մեծա-
պույն փորձություններ եր ապրում :

Սպիտակ-գվարդիականներն ու ինտերվենտները
կրակե ողակով սեղմում եյին յերիտասարդ Խորհր-
դային հանրապետությունը : Պրոլետարական կենտ-
րոնները՝ Մոսկվան ու Լենինգրադը քաղցած են :
Յերկրի ներսում մենշևիկներն ու եներները Փրանսի-
ական ու անգլիական վորերով հակահեղափոխական
պավագրություններ ու ապատամբություններ են կազ-
մակերպում : Բուխարինյան աղտեղությունը պատ-
րաստում է ընկերներ լենինի, Ստալինի, Սվերդլովի
սպանության գործը : Ցարիցինի պատերին են մատե-
նում կրասնովի հակահեղափոխական բանդաները :

Այստեղ են ճշուամ նու ողիուակ բանակները հարս-
վից և արևելքից :

Այստեղ, Յարիցինում, վճռվում եր հեղափոխու-
թյան բախտը : Բայց այստեղ եր ընկեր Ստալինը : Նա
պարզ հասկանում եր, վոր Խորհրդային հանրապե-
տության համար Յարիցինի անկումը կնշանակեր Հա-
րավի, Արևելքի և Դոնի բոլոր սպիտակ-գվարդիական
ուժերի միացում և սովամահություն պրոլետարական
կենտրոններում :

Խորաթափանց կերպով նայելով զինվորական և
քաղաքական ապարատին և մերկացնելով այստեղ ա-
ղաղակող այլանդակությունները՝ սարոտածը, դա-
վաճանությունը, ընկեր Ստալին սկսեց յերկաթե
ձեռքով կարդ մտցնել և «ամենակարճ ժամանակում
մթերման դործի արտակարդ լիազորից դառնում ե
ցարիցինյան ճակատի բոլոր Կարմիր ուժերի փաստա-
կան դեկավար» (Վորոշիլով) :

Յերբ իր անորինակ 700 կիլոմետրանոց յերթն
Ուկրաինայից կատարելով Յարիցին հասավ ընկեր
Վորոշիլովի բանակը, ընկեր Ստալինը հենվելով այդ
բանակի հրամանատարական կաղերի վրա, յեռուն
աշխատանք ծավալեց քաղաքի պաշտպանությունը
կազմակերպելու գծով :

«Ամենակարճ ժամանակում ստեղծվում են դի-
վիզիաներ, բրիգադներ ու գնդեր : Շտաբը, մատա-
կարարման մարմինները և ամբողջ թիկունքն ամենա-
արմատական կերպով մաքրվում են հակահեղափոխա-
կան և թշնամի տարրերից» (Վորոշիլով) : Վարչո-
ված գավաճանների, տրոցկիստների, հեղափոխության

թշնամիների վոխարեն ընկեր Ստալինը, հակառակ
հուղա Տրոցկու հեռադրական բողոքների, նշանակում
է լավագույն, մարտերում ստուգված, տոկուն, ընդու-
նակ բոլշևիկների և հրամանատարների :

Դրանց թվումն եր նաև Նիկոլայ Ռուդնեվը : Ուկ-
րաինայից անցնելու ժամանակ Ռուդնեվը նվաճեց
անվախ հրամանատարի հոչակ և բանակի բոլոր հրա-
մանատարների ու մարտիկների սերը : Նրան ուղղակի
կոլյա ելին կանչում :

Յարիցինում Նիկոլայ Ռուդնեվը նշանակվում է
10-րդ բանակի ձևավորումների շատրվագումը : Այս շատ
պատասխանատու պոստ եր : Յարիցինում հավաքված
կարմիր զորքերի ջոկատային սխտեմը պետք եր վե-
րացնել և ստեղծել կարմիր բանակի խոկական կանո-
նավոր զորամասեր, վորոնք կարողանային դիմանալ
գաղանացքած, լավ զինված և զենքին շատ լավ տիրա-
պատասխանացքած, պետք ուղարկային բանդաների հետ ունեցած
պետող սպիտակ-կաղակային բանդաների հետ ունեցած
մարտերին : Դրությունը վատանում եր նրանով, վոր
Յարիցինին կենդանի ուժերի ոգնություն հասցնելը
դժվար էլի : Ընկերներ Ստալինի և Վորոշիլովի դի-
մումները այն ժամանակի չանրապետական ուղմա-
գեղափոխական խորհրդին՝ ոգնություն ուղարկելու
մասին, Տրոցկին անուշադիր եր թողնում : Այս պատ-
ճառով ել Ռուդնեվի առջև առաջնահերթ ինդիր եր
զրված սեփական պահեստ ստեղծել սպիտակ կա-
ղակների գեմ կովող բանակի համար :

Յեւ Նիկոլայ Ռուդնեվը շատ և լավ աշխատեց
այս խնդրի վրա : Նա կազմեց նոր գնդեր, գումար-
ակներ, վաշտեր : Նա վերակազմում եր աազմաճա-
կատից յեկող, կորուստներ կրած մասերը՝ նրանց մեջ

թարմ ուժեր լցնելով։ Ռուդնեղի սրամադրության տակ միշտ թարմ զորամաս եր լինում՝ պատրաստ նետվելու այնտեղ, ուր ճակատը ճեղքվում եր, ուր սպիտակ կաղակները պատռում—անցնում եյին։

1918 թվի հոկտեմբերի կեսերին վաթսուն հազարից ավելի սպիտակ կաղակների զորամասեր պաշարեցին Յարիցինը։ Կատաղի կոխվներ ծավալվեցին։ Սպիտակ կաղակները կատաղաբար հարձակվում եյին 10-րդ Կարմիր Բանակի ճակատի վրա։ Նրանց գործած ճնշումն սպառնազին եր։ Հարավային ճակատամասամ կարմիրներն սպիտակ կաղակների կողմից ჩեկետով կային ու Սարեպտային եյին սեղմվել։ Սպիտակ կաղակների անընդհատ կերպով իրար հաջորդող գրոհները յետ են մղվում սվիններով։ Փամփուշտներն ու արկերն սպառմելու վրա եյին, բայց քաղաքի շուրջը յեղած թշնամու ողակն այնուամենայնիվ ճակատագրական կերպով սեղմվում եր։ Լարվածությունն իր դագաթնակետին եր հասել։ Տեղ-տեղ արդեն ոլրովոկացիոն, խուճապային ճայներ եյին լսվում նահանջի մասին։ Ընկնը Վորոշիլովն այդ պրովոկացիային հետևյալ հրամանով պատասխանեց։ «Դրաված դիւքերից վոչ մի քայլ յետ չնահանջել, առաջ՝ մինչև կարգադրություն։ Այս կարգադրությունը չկատարողները կդնդակահարվեն»։

Սպիտակ կաղակներն առանձին կատաղությամբ եյին սեղմում հարավային մասի վրա։ Նրանց չարանենք, դաֆան գրոհները տեղի եյին ունենում անընդհատ։ Կռիվը ձեռնամարտային եր դառնեամ։ Հաբումային մասի պաշտպանները—հոգնած, ուժասպառ

յեղած, մեծ կորուստներ կրած, —դերմարդկային ջանքերով պաշտպանվում եյին սպիտակ-կազակներից։

Եեվ այս ամենասպատասխանատու պահին, այսուեղ կովող դյուղացիական յերկու գնդերում զորակոչված գյուղացիների մեկ մասը կուլակային աղիստացիայի ազդեցության տակ դիրքերը լքեց ու դափնաձանությամբ անցավ սպիտակների կողմը։ Ճակատը բաց մնաց։

Այս բանը կատարվեց Բեկետովկայի և Ոտրադնիի շրջանում։ Սպիտակ կաղակները հնարավորություն ստացան ներս խուժել և տապալել դաշտաճանությամբ թուլացած պաշտպանների գիծը՝ ջախջախելով պաշտպանության ամբողջ գիծը՝ թիկունքից և թևերից։ Գոյացած ճեղքը եր լցնել։ Այսուեղ պետք ե մեծ հեղինակութամբ, անսովոր վճռականությամբ և մեծ անձնվիրությամբ մի հրամանատար ուղարկել։ Այդպիսի հրամանատարը Ռուդնեղին եր։ Ընկեր Վորոշիլովը հրամայեց նրան պահեստի բրիգադով անմիջապես մերկացած տեղամասը հասնել և դրությունը վերականգնել։

Բրիգադն Ռուդնեղի գլխավորությամբ արագ կերպով սլանում ե գեպի Բեկետովկա։ Սպիտակ կաղակներն արդեն իրենց նպատակին մոտ եյին, —նրանք սկսել եյին ճակատից ներս ծծմբել։ Առանց մեկ ըուպե կորցնելու, Ռուդնեղը հենց ճանապարհից փոռում է իր բրիգադը և հարձակման և տանում նրան։ Սպիտակ կաղակները նահանջեցին, բայց իսկույն ել մեծութերով հերթական գրոհի անցան։ Կիսարքած սպիտակ կաղակների այս գրոհը կատաղի յեր և սարսափելի։ Գյուղացիական գնդի մնացորդները չելիմացան,

յնցվեցին և շտասլ կերպով նահանջեցին, իսկ գնդի
հրետանին դավաճանորեն անցավ սպիտակների կողմը:

Պաշտպանվողների մեջ չփոթություն ընկալված էր:
Պաշտպանվել, թե՝ փախչել: Այս բոլորը կատարվեց
հանկարծակի և Ռուզնելի աչքի առաջ: Մի ակնա-
թարթում կարող եր աղետ տեղի ունենալ: Անհավա-
տալի համարձակ վճիռ պետք եր կայացնել:

— Առաջ, իմ յետեից, գրոհի՛, — զոռաց Ռուզ-
նելին իրեն շրջապատող մարտիկների փոքրիկ խմբին
և հարձակվեց սպիտակ կաղակների վրա:

Ռուզնելի ձայնը, նրա շեշտակի կերպով առաջ
նետվելը կարուկ կերպով փոխեցին գրությունը:

Ռուզնելին մոտ դժոնվող մարտիկները մըրկի պես
առաջ նետվեցին: Սպիտակ կաղակները յետ շալրտվե-
ցին, նրանք չտապ կերպով նահանջեցին: Դրությունը
վերականգնված եր: Ճեղքման սպառնալիքը վերաց-
ված եր:

Բայց նա, վորի անձնական որինակը փոխեց կովի
դեպքերի ընթացքը, ընկած եր արյունով ներկված խո-
տի վրա: Նիկոլայ Ռուզնելի ծանր վիրավորված եր:
Նա մեռնում եր: Տիուր մարտիկները բարձրացրին ի-
րենց սիրելի հրամանատարին:

— Հայտնեցեք ընկեր Վորոշիլովին, վոր հրամանը
կատարված ե, ճեղքվածքը վերացված ե, — հանդիսա-
և հատ-հատ խոսեց Ռուզնելի:

Նիկոլայ Ռուզնելի զոհվելու լուրն արագ կերպով
տարածվեց Ցարիցինը պաշտպանողների շրջանում...

«Խոր վշտով եմ նշում ընկ Ռուզնելի հերոսական
մահը մարտիկի փառավոր դիրքում, հակահեղափո-
խության դեմ», — հաջորդ որը, հոկտեմբերի 16-ին,

զբում եր ընկեր Ստալինը: «Հավերժ հիշատակ կո-
մունիզմի անձնվեր զինվորին: Անխնա՞ վրեժ ցարա-
կան գեներալներից և նրանց արբանյակ յեսառւնե-
րից:

Հանրապետության Ռազմա-Հեղափոխական Խոր-
հրադի անդամ, Ժողովրդական կոմիսար՝ Ստալին»:





ԴՈՒՆԴԻԶ

Խվան Անտոնիովիչ

«...Խսկ Կարեիր Դունդիչը: Ո՞վ կառող է մոռանալ երան, Քաջուրյամբ, անվեհերուրյամբ, բարուրյամբ յեվ ընկերական սրտակցուրյամբ ով կարող է հափասարվել այս տառացիսեն հեմիարային հերոսին: Նա մի առյօն եր՝ հենույց մանկական սրտով»:
(Կ. Յե. Վ. Պ. Ռ. Ռ. Շ. Լ. Ո. Վ.)

Շրմքում են քշողների խարազանները: Լեռնային արոտներից գանդաղ կերպով առաջ են դնում հարյուրավոր յեղներ, ցուլեր, կովեր, վոչխարներ: Նըրանց քշում են շուկաներն ու սպանդանոցները:

Այս բոլոր անասունները պատկանում են Դունդիչի հորը: Նրա հայրը հարուստ եր, գաժան և անարդար: Նրա հովիվներն ու բատրակները վատ եյին ապշում: Նրանք ամբողջ որերով աշխատում եյին արեկի կիզիչ ճառագայթների տակ և նույնիսկ իրենց աղքատիկ ճառ ուտելու ժամանակ չունեյին:

Պատանի Դունդիչն իր հորն ատում եր նրա հարյուրության և անարդարության համար: Յեվ մի անդամ, չդիմանալով հոր դաժանությանը, հեռացավ ձնողական տնից:

Դունդիչը սերբ եր: Նա ծնվել է 1893 թվին Հարավսլավիայում (Նախկին Սերբիա): Նրա անունն եր Ռեկո Զուլիչ:

Հորից հեռանալով՝ Դունդիչն այնուամենայիվ կարողացավ հաջողությամբ ավարուել միջնակարգ գոլոցը: Զահել, ընդունակ, վառվուն պատանի Դունդիչը տեսնում եր սերբական թագավորության դյուզացիների անթափանց խավարն ու կարիքը և վճռեց իր կյանքը ժողովրդին նվիրել, — նա ժողովրդական ուսուցիչ դարձավ:

Վաղուց չեր, վոր սերբերը գտնվում եյին ոկուպանտ թուրքերի լծի տակ: Շատ արյուն թափվեց, մինչև վոր վերջապես սերբ՝ ժողովուրդն ազատվեց զիշատիչ թուրք յենիչերիներից, փաշաներից և դաժան սուլթանից. այժմ պետք է բարձրացնել հարազատ աշխատավոր ժողովրդի կուլտուրան: Բայց չորս կողմը թնամիներ են, գիշատիչներ՝ թուրք փաշաներ, բուլղարական և ալբանական իշխաններ: Նրանք աշխատում են ստրկացնել Սերբիան: Այդ ժամանակ

Ժողովրդական ուսուցիչ Դունդիչը զենք և վերցնում :
Փոքրությունից ել նա լավ ձիալար եր :

1912 թվին Դունդիչը սերբական բանակի շարքերում պաշտպանում եր իր հայրենիքն ինտերվենտ թուրքերից : 1913 թվին նա կովում եր բուլղարների և ալբանացիների դեմ :

Կովիներն իրար եյին հաջորդում : Դունդիչը մարտական ձիուց չի իջնում : 1914 թվին փոքրիկ Սերբիա խուժեցին ավստրո-գերմանական զորքերի հրոսակները : Դունդիչն սպահեծելակ ե :

Յերկու տարի շարունակ նա սակմածակասում կովում և գերմանացիների և ավստրիացիների դեմ :

1916 թիվն ե : Դաժան կրիվ ե : Թշնամիներով չըջապատված, քաջալար կովում և Դունդիչը, բայց ծանր վերքը և արյան կորուստը նրան վայր են գըցում : Գիտակցությունը կորցրած վիճակում Դունդիչը գերի յե ընկում մի ավստրիացի հեծելակի ձեռքը :

Բայց գերության հենց առաջին որից Դունդիչը չի թողնում աղատ լինելու միտքը և 1916 թվի վերջին նա ավստրո-գերմանացիների ճիրաններից Ռուսաստան է փախչում :

Յարական կառավարությունը սերբ գեներալների ողնությամբ «կամավորական» սերբական դնդեր կադմեց ավստրո-գերմանական գերությունից՝ միախած սերբերից, փախատական սերբերից, խորվատներից, վորոնց ավստրո-գերմանացիներն իրենց բանակներն եյին զորակոչել : Ամբողջ սերբական կորպուս եր ըստեղծվել : Դունդիչն ել հենց այս կորպուսն ընկալ :

Բայց Դունդիչը կովել չեր ուղում :

— Պատերազմը՝ պատերազմ, — ասում եր ուսուցիչական-բուլղարյան կովում կովում էրին, վորոնց հանդիպում եր ձակատում, — բայց այդ պատերազմից ի՞նչ կըստանա ժողովուրդը՝ բանվորներն ու զյուղացիները : Յեվ Դունդիչը հեղափոխական պրոպագանդ և մղում սերբական կորպուսում :

Վրա հասավ վետրվարյան հեղափոխությունը : Սերբական կորպուսի դնդերում հուդմունք սկսվեց : Ողեսայի, Նեկուլայեվի, Խերսոնի, Յելիզավետպուրագի ուայնը, ուր սերբական դնդերն եյին, յեկան սերբական գեներալներ Ժիվկովիչը և Խոջելիչը :

— Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և նրա գերազույն հրամանատար Կերենսկին կոչ են անում ձեզ Հարձակվել ավստրո-գերմանացիների վրա, — ասում եյին նրանք, — վաղը կսկսենք ձեզ ճակատ ուղարկել :

Բայց Դունդիչը և տասնյակ սերբ հեղափոխականներ ընդհատակյա բուլղարյան կոմիտեների ողնությամբ իրենց գործը կատարեցին :

— Կորչի պատերազմը, այսու չենք ուղում կըսցել — պատասխանեցին գեներալներին սերբական «կամավորական» կորպուսի զինվորները :

Այս բանը չսպասելով՝ զեներալները զինաթափում են «կամավորական» կորպուսը և փակում են նրանց կիեվի մոտի համակենտրոնացման ճամբարում :

Միայն չոկեմբերյան հեղափոխությունը բացեց ճամբարի վշալարերով հյուսված դոները :

Պրոլետարական մեծ հեղափոխությունը թափա-հարեց ճամբարը :

Բանտարկվածները զենք սուպացան։ Նախկին ցարական «կամավորական» սերբական կորպուսի վուխաքենտառաջ յեկան նոր Բանվորա-Գյուղացիական սերբական, իրոք վոր կամավորական կարմիր-դվարդիական ջոկատներ։

Այսպիսի ջոկատներից մեկի գլուխ անցավ Դունդիչը։

... 1918 թվի վետրվարն է։ Տրոցկու դավաճանությունից հետո խորհրդային յերկրի վրա յեւ շարժվում ոտարերկրյա ինտերվենտների յերեք հարյուր հազարանոց մի բանակ։

Դուրժուական պետյուրական Ռազման ոկուպանտներին վաճառեց Ուկրաինան, ուկրաինական ժողովուրդը և հեղափոխությունը։

Ինտերվենտների գեմ են դուրս դալիս սրբության հեղափոխության յերիտասարդ պարտիզանական կարմիր-դվարդիական ջոկատները։ Առջեկց գրնացող այդպիսի ջոկատներից մեկն եռ Առաջին Լուդանսկի սոցիալիստական պարտիզանական ջոկատը, վոր գործում եր Լուդանսկի փականագործ, հին ընդհատակյա-բոլշևիկ Վորոշիլովի հրամանատարության տակ։ Այս ջոկատն արդեն մարտին քաջաբար կովում եր գերմանական կանոնավոր բանակի գեմ։

Վորոշիլովի կազմակերպչական կորովը, հրամանատարական չնորհքը, նրա առաջին հաղթությունները գերմանացիների վրա, Լուդանսկի գնդի և նրա հրամանատար Վորոշիլովի անվան շուրջը փառքի լուսապատճեցին։ Ջոկատն եյին լցվում հաղարավոր կամավորներ։ Վորոշիլովի մոտ եյին գաղաքավոր կամավորներ։ Վորոշիլով անջատ-անջատ ջոկատներ, վո-

րոնց մեջ երնակ Դունդիչի փոքրիկ ջոկատը (150 հոգի)։

Սպրիլի 25-ին Ռուգակովով կայարանի ուայոնում Վորոշիլովը բարձաթիվ ջոկատներից կազմեց նոր բանվորա-գյուղացիական 5-րդ բանակ։ Յեւ այս բանակն ել խկույն պարտության մատնեց ոկուպանտներին։ Վերցրին գերիներ, թնդանոթներ և նույնիսկ յերկու սավանակ։

Ամբողջ հերոսական լեզենդային յերթը Ռուգակովոյից մինչև Յարիցին Դունդիչն անցավ վորպես իր ջոկատի հրամանատար՝ դանվելով Վորոշիլովյան 5-րդ բանակի կազմում։ Նա բոլոր մարտերում քաջարանակի կովում և ոկուպանտների և սպիտակ կազմակերի գեմ։

Դունդիչի ջոկատը լուծվեց հերոսական Մորովյան-Դոնցեցիկի ջոկատի մեջ, վորի հրամանատարն եր Յեֆիմ Շաղենկոն։

1918 թվի հուլիսի սկզբին Վորոշիլովի բանակը թշնամիների ողակը կուլով ճեղքելով հասնում է Յարիցին, վորտեղ այդ ժամանակ Ստալինն եր։ Յարիցիկը պաշտպանելու նպատակով Վորոշիլովը նրա համար ընկած 30,000 մարտիկներ, մեծ մասով Դոնբասի պրուետարներ։

Ամառը, Յարիցինի հերոսական պաշտպանության որերին, Դունդիչը շատ անախորժություններ պատճառեց գեներալ Կրասնովի սպիտակ կազմակերին։

Ընկեր Վորոշիլովը թշնամու գրոհներից պաշտպանվելով, ընկեր Ստալինի հանձնարարությամբ ըստեղծում է 10-րդ բանակը և կազմակերպում է նոր դիմիկիաներ։ Յեւ գաղաքական հեղափոխական ջոկատի անդամներ, Վերեք սերբական հեղափոխական ջո-

կատոներից, վորոնք կենտրոնացած ելին Զյորնի-Յարի շբանում, կազմակերպում և առաջին հարավսլավյան կոմունիստական գունդը հեծելաղորային դիվիզիոնով, վորի առաջին շարքերում միշտ քաջաբար կովում և Դունդիքը: Հետաղայում այս դիվիզիոնից և այլ ձիավոր մասերից կազմվեց նոր՝ Յ-րդ հեծելաղորային դունդը, վոր լուծվեց 1-ին դունյան համահավաք խորչը լուղային հեծելաղորային դիվիզիոնի մեջ:

Սպիտակների հետ ունեցած հենց առաջին կըռվում, վոր տեղի ունեցավ Գնիլոտկայայկայայի մոտ, Բուղյոննին նկատեց Յ-րդ հեծելաղորային դունդի հետափոխական-սերբերի հերոսությունը:

— Սրանք իսկական ինտերնացիոնալ մարտիկներ են, — ասաց նա:

Հենց այս կովում ել Բուղյոննին առաջին անգամ տեսավ զարմանալի քաջությամբ և արիությամբ աչքի ընկնող Դունդիչին և մոտ ծանոթացավ նրա հետ: Կարմիր հեծելաղորում ունեցած ծառայության առաջին որերից Դունդիչին սկսեցին իվան Անտոնովիչ:

1919 թվի հունվարից սկսած՝ Դունդիչը կովում է Յ-րդ հեծելաղորային դիվիզիոնի շարքերում, իսկ հետո Բուղյոննու ձիավոր կորպուսում, և այդ ժամանակից սկսած ել առանձնապես վառ կերպով և ծափալվում նրա անձնապոհ մարտական աշխատանքը: 1919 թվի գեկտեմբերից Դունդիչը լեզենդային Առաջին Հեծյալ բանակի շարքերումն է: Նա դառնում է ընկեր Բուղյոննու անձնական ադյուտանտը և նրա հանձնարարությունների կատարման հրամանատար,

Հիամամանակ կատարելով ընկերներ Վորոշիլովի և Բուղյոննու այն առանձին մարտական հանձնարարությունները, վորոնք բացառիկ քաջություն, արիություն և հեծելաղորային դուրծը դիտենալ ելին պահանջում:

Հանրապետության թշնամիները լավ ելին ճանաշում Դունդիչին, վորը յերբեմն իր դնդով նրանց թիկունքներն եր անցնում և այստեղ խուճապ ու իրարանցում գցում:

Կովում Դունդիչի սիրած գործն եր թշնամուն ձախ ձեռքով դնդակահարել ատրճանակով, իսկ աջով՝ սրով կտրաել: Դունդիչը, վոր հրաշալի ձիավար և խիղախ հեծելակ եր, ձին վոտքերով եր կառավարում: Դեպքեր են յեղել, յերբ նա միայնակ հաշիվ ետեսել իրեն ըրջապատող 10-15 թշնամիների հետ:

Յել հաճախ վերադառնալով այդպիսի հանկարծակի հարձակումներից կամ թշնամու թիկունքում կատարած խոր հետախուզությունից՝ Դունդիչը հետու գերիներ եր բերում, այն ել վոչ միայն զինվորներ, այլև սպաներ, և վոչ միայն հետեւակներ, այլև ձիերի հետ միասին:

Դունդիչն ազատ խոսում եր սերբերեն, մաջարերեն, գերմաներեն և հունգարերեն, հասկանում եր էտալերեն ու ֆրանսերեն: Նա գեղեցիկ եր, շքեղ ու վայելչակազմ: Պետք յեղած ժամանակ նա թշնամութիկունքում յերբեմն սերբ, յերբեմն սպիտակ սպանեալ ձևում:

Դունդիչը յերբեմն թափանցում եր թշնամիների շտաբները, այնտեղից ձեռք եր բերում շատ արժեքա-

Վոր գաղտնի ոպերատիվ հրամաններ և զանազան տեսակ փաստաթղթեր :

Առաջին Հեծյալ բանակի հայտնի հրամանատարներից մեկը — ընկեր Տյուլենեվը, վոր լավ եր ճանաչում Դունդիչն, նրա մասին այսպես է հիշում .

«...4-րդ հեծելազորային դիվիզիան Ավելովո կայարանի ըրջանում անհավասար կորվ եր մղում սպիտակների հեծելազորի հետ : Շատիլով և Պոկրովսկի գեներալների յերկու կորպուսները կատաղաբար ընկնում եյին կարմիր մարտիկների վքա : Այս գրոհները յետ մղելով՝ դիվիզայի հրամանատարությունը յերեկոյան դեմ ողնության ուղարկեց յուր վերջին պահատը — 21-րդ գունդը, վորի հրամանատարն եր Դունդիչը : Կողմերը հավասարակշռում եյին : Սպիտակների հերթական ձիավոր գրոհը թուլացավ :

Ուղարկելով կարճատե դադարից և աշխատելով՝ սպիտակներին իր յետելից քաշել՝ դիվիզիայի հրամանատարությունն սկսեց իր մասերը յետ քաշել : Սպիտակներն ընկան նրանց յետելից և արդեն պատրաստ եյին իրենց հաղթանակը տոնելու : Բայց նրանք չարաշար սիալվեցին : Դունդիչի գունդը շեշտակի խփեց հակառակորդի թեին ու թիկունքին, գրավեց նրա հընկերանին, յերկրորդ կարգի գումակը և հաղթություն տարավ :

Սպիտակների ըրջանում անհավասարի խուճապ բարձրացավ : Նրանք կույի դաշտում տասնյակ թշնդանոթներ ու գնդացիրներ թողին : Մի քանի հարյուր սպիտակ կաղակներ կարմիր ձիավորների ձեռքն ընկան :

Զինվորական խորամանկության, համառության

ու քաջության մի այլ նշանավոր որինակ ցույց տվեց Դունդիչը 1919 թվին Վորոնեժի տակ : Այն ժամանակ Կարմիր հեծելազորն իրադրութում եր Դենիկինին ջախնախիւլու ստալինյան գլխավոր պլանը : Մարտիկները վասպում եյին թշնամու հետ կովկելու և նրան վոչընչացնելու տենչով :

Նախքան Վորոնեժի վրա գնալը վորոշված եր մանրազնին կերպով հետախուզել թշնամուն՝ պարզելու նրա պաշտպանության սխուեմը : Յեվ ահա սեպտեմբերի 23-ին Դունդիչի հրամանատարությամբ մեկ հեծելազոր կլեվանի ըրջանում Վորոն գետի վրայով անցավ հակառակորդի կողմը :

Գիշեր եր : Կարմիր հետախույզներն առանց դրժկաբության հայտաբերեցին սպիտակների պահպանակներն կետը : Հարց եր առաջանում՝ ինչպես անցնել թշնամու պահպանման կետից :

— Ուսադիր կղցնելով, — հրամայեց Դունդիչը, և տաս ըսպեյից հետո հեծելազետն արդեն շարժվում էր Զագոնսկի խճուղով :

Մթության միջից անսպասելի կերպով մի ձայն լսեց :

— Կանդնի՛ր, ո՞վ և յեկողը :

Հենց նույն ակնթարթում ել յերկու կուբանյան կազակներ դուրս վաղեցին առվեց և հրացանների փողերը դեմ արին հեծելազետին : Դունդիչի դեմքի վազ մի մկանը չգողաց : Նա առաջ անցավ և սպիտակ սպատ ձեանալով ասաց :

— Գուեցիկներ, կուրացե՛լ եք, ի՞նչ ե : Զե՞ք տեսնում, վոր ձերոնք են դալիս : Յես ձեզ... սրիկաներ... .

Սպիտակներն ապչեցին և թույլ ային, վոր կար-

ժիր հեծելաղետն անցնի ճակատի դժով, իսկ Դուն-
դիչին ել հենց այլ եր հարկավոր: Հետախույզներն ա-
բագ կերպով մտան սպիտակների դիրքի խորքը և
սկսեցին պարզել, թե վո՞րտեղ են խրամատները, փը-
շալարե փակոցները և դեպի քաղաք տանող աղատ
մտուցները:

Վերջապես՝ առաջիկա կովի համար անհրաժեշտ
տեղեկությունները հավաքված են: Այժմ պահանջ-
վում եր նորից անցնել սպիտակ ճակատը, վորակեզի
այդ տեղեկությունները ժամանակին հասցնեն հե-
ծյալների կորսուսի շտարին: Մեկ բուլեյի ուշացումը
կարող եր ամբողջ գործը փչացնել: Սպիտակներն ի-
մացն, վոր իրենց թիկունքում կարմիր հեծելաղետ
կա և մի խումբ ձիավորներ զցեցին Դունդիչին դըտ-
նելու և բոնելու:

Գեներալ Շկուրոն սպասում եր, թե ահա ուր վոր
ե կրերեն կարմիր մարտիկներին, վորոնք համար-
ձակվել են իր թիկունքն անցնել: Բայց դրա փոխա-
րեն նրան հայտնեցին, թե՝ հեծելաղետին վնասութու-
ուղարկված պորուչիկը կտրտված է, իսկ հեծելաղե-
տը հեռացել է:

Գեներալ Շկուրոն սեպակմբերի 24-ին վորոնեժից
փախչելով աղատվեց: Իսկ հենց նույն որվա յերեկո-
յին քաղաքային թատրոնում, ուր միախնդ եր, վորո-
նեժի բանվորները հիացմունքով վողջունում եյին
կարմիր հրամանատարին՝ Դունդիչին:

Մի անդամ վերի ընկնելով՝ նա սպիտակներին
խարեց և այնտեղից վերադարձավ հրաշալի արշավա-
ձիով:

Բայց Դունդիչը միայն քաջ չէր: Ամենից առաջ

նա բոլշևիկ եր: Զգայուն, բարի, սիրալիր, նա մարդ-
կանց մոտենալ դիտեր, և ինտերվենտներից գերի
վերցրած զինվորները դաստիարակվում եյին նրանից:
Նրանց մայրենի լեզվով նա Հոկտեմբերյան հեղափո-
խության մասին նրանց ճշմարտությունն եր ասում,
նրանց աչքերը բաց եր անում կատարվող տնցքերի
հանդեպ, և գերիներից շատերը, մտնելով Առաջին Հե-
ծյալ բանակի շարքերը՝ նույնպես անսահման անձնվի-
րությամբ ու քաջությամբ եյին կովում սոցիալիստա-
կան հայրենիքի համար, ինչպես և նրանց լեղենդային
հրամանատար Դունդիչը:

Դունդիչը բացառիկ դգայուն ընկեր ու բարեկամ
եր: Շատ ե պատահել, վոր նա մարտիկներ ու հրա-
մանատարներ ե ազատել մորձանքից:

Մի անդամ Դունդիչի գունդը վերկու կարմիր
բանակայիններ յեկան՝ յերկու լավ ձի հեծած: Յեր-
կուսն ել կոմունիստներ եյին, յերկուսն ել նախկին
ռազմագերիներ, վորոնք իմպերիալիստական պատե-
րազմի ժամանակ ծառայել եյին ավատրողերմանա-
կան բանակում վորպես հուսարներ:

— Բնկեր գնդի հրամանատար, մենք դասալիքներ
ենք, — աղնվաբար խոստվանեցին նրանք Դունդի-
չին, — մեր նախկին հունդարական հուսարներին տես-
նելով ձեր գնդում, մենք չեյինք կարող դուրս չդալ
մեր զորամասերից և չգալ ձեզ մոտ: Բնդունեցեք մեդ
ձեր գունդը:

Յեկողները լավ եյին տիրապետում դենքին, ձի-
ուն, և, ինչպես հետո շատ փորձեր ցույց տվին,
կովում համարձակ եյին:

Դունդիչը իր մոտ թողեց նրանց:

Բայց դորամասից հեռանալով՝ կարմիր բանակացիներն իրենց նախկին հրամանատար-ինժեներին գրեցին մի տոմսակ, վորում հաղորդում եյին, թէ զնում են վառապանձ Առաջին Հեծյալ բանակը՝ կը սկսած պայքարելու հեղափոխության թշնամիների գեմ, ինչպես իրենք առաջ կովում եյին կուչական ճակատում:

Ինժեները բողոք ուղարկեց Առաջին Հեծյալ բանակի ՌՀԵ-ին: Կարմիր բանակայիններին շուտ գտան և նրանց Հեղափոխունակն եր սպասնում: ՌՀԵ-ի նիստերից մեկում նշանակվեց այդ գեղաքերի քննությունը: Նիստին ներկա եյին ընկերներ Վորոշիլովը, Բուդյոննին, Շչադենկոն: Կանչվեց նաև դնդի հրամանատար Դունդիչը:

Իր մարտիկներին ուժեղ կերպով պաշտպանում եր Դունդիչը:

— Նրանք յերկուսն ել գլուխակից մարտիկ-կոմառնարներ են: Մեկը դնդի մեջ դպսակի հրամանատար ե, մյուսն իմ ամենաքաջ պատվիրակատարն ե, և յես ինդը ում եմ ներել նրանց:

Բուդյոննին լսելով Դունդիչին, վերցնում ե «դասալիքների մասին» յեղած թղթապանակը և իր խոշոր ձեռագրով դրում ե «գործը հանձնել Հեղափոխության» և հետո ցածր ձայնով խորհրդակցելով Վորոշիլովի հետ ու ժպտալով Դունդիչին նայելով, խոշոր տառերով ավելացնում ե «քաղաքացիական կոիկը վերջանալուց հետո»:

Կարմիր բանակայինները վրկված եյին¹⁾:

Դունդիչը անդամ վիրավորվեց քաջ Դունդիչը, բայց վոչ մեկ անդամ կովի դաշտն ու ուղղմաշարքերը չթողեց:

— Կարմիր Դունդիչը մեր ամբողջ Առաջին Հեծյալ բանակի հեղուսն ե, — նրա մասին ասում եր ընկեր Վորոշիլովը:

Դունդիչին ճանաչում, սիրում ու նրանով պարձենում եր ամբողջ Առաջին Հեծյալ բանակը: Նրա լեղենդային սիրավործություններով եյին դաստիարակվում մարտիկներն ու հրամանատարները:

Իր կարմանալի քաջության համար ընկեր Դունդիչը պարզեցարվեց Կարմիր գրութիւնը:

Սերբիայի նախկին ժողովրդական ուսուցիչը, վորիր կյանքը տալել եր հեղափոխությանը, ամեն որ, ամեն ժամ ավելի ու ավելի լայն եր ծալալում ուղղմական կարմիր հրամանատարի իր տաղանդները:

...1920 թիվին ե, հուլիսի 5. Ռունոն սպատակներից ազատովելուց հետո Դունդիչն իր գնդով անցավ սպատակ լեհերի թիկունքը, վորպեսզի նրանց գեպի արևմուտք գնալու ճանապարհը փակի:

Դունդիչի ՅՅ-րդ հերոսական հեծելագնդի գիմաց մի քանի հետևակ գիվիզիաներ և հեծյալ գնդեր եյին կանգնած:

Տաք, արյունահեղ կոիկները չեյին դադարում վոչ ցերեկը, վոչ գիշերը: Բայց Դունդիչը հանձվող ներից չեր:

— Վոչի՞նչ, տղերք, դուրս կդանք, — ուրախ ծի-

բանակի հերոս—Կարմրազուշ գրող Մատե Զալկան, «Հուսարներ» պատմվածքում:

ծաղելով ասում եր Դունդիչն իր տանջված մարտիկ-ներին:—Մեղ համար կարեռը մարտական խնդիրը կատարելն է:

Յեվ չնայած սպիտակ լեհերի ուժերը տասն ան-դամ գերազանցում եյին կարմիրների ուժերից, Դուն-դիչն իր վրա դրված խնդիրն իր գնդի հետ միասին լրիվ կերպով կատարեց:

Դրանք տաք կոխիներ եյին: Ամբողջ Յ-րդ հեծյալ բրիգադը չորս անդամ գրոհի նետվեց, բայց հակառա-կորու համառորեն սպահպանում եր իր դիրքերը:

...Դունդիչն իր պատվիրակատարի հետ, ինչպես միշտ, դնդի դիմումն է: Նա այսուամենայնիվ վճռում է հակառակորդին տապալել: «Ուռա՛» գոչելով գուն-դը տաքացած ձիերով գրոհում է չորս կիլոմետր հե-ռու գտնվող թշնամու վրա: Վերջին բլրակն է: Սպի-տակ լեհերը փոթորկային կրակ են բացում: Բայց մի՞թե նրանք կարող են Դունդիչի փառավոր գունդը կանդնեցնել: Դունդիչը լեհ ուղանների հետ սուսերա-մարտի բոնվեց: Նրան 20 լեհեր շրջապատեցին: Աչա Դունդիչի կարիչ հեծյալները մտան լեհական հրա-չիդների առաջին շղթաները և որբեցին նրանց:

— Պաներ, զենքը ցած գցեք:

Իզուր նախազդուշացում: Լեհական զինվորներն առանց այն ել հրացանները դցում ու գոռում են— Յես ձերն եմ:

Առաջին շղթան տապալված է: Բայց հանկարծ դնդացիքները նոր ուժով սկսեցին տկտկալ, վրոնց յետեւում այս անդամ արդեն լեհական սպաներ եյին սպառկած: Այդ ժամանակ՝ կովով հափշտակված, սուլու-

ու ատրճանակը ճոճելով առաջ և ոլանում Դունդիչը՝ առանց ուշադրություն դարձնելու մահաբեր գնդակնե-րի վրա, վորոնք ծակող սուլոցով թռչում են չորս կողմում:

— Զենքը նետե՛լ, — զորում ենա լեհական զին-վորներին:

Հանկարծ՝ ինչ պատահեց... Անհավատալի յէ: Վոչ, այդ իրոք այդպես է:

— Ընկերնե՛ր, յես վիրավորված եմ, — լսում են մարտիկներն իրենց մարտական, սկրելի հրամանա-տարի անսովոր թույլ ձայնը:

Դունդիչին շրջապատեցին նրա մարտական ընկերու-ները, բայց նա արգեն մեռնում էր: Թշնամու գըն-դակը դլորել եր պանծալի հերոսին: Հաջորդ որվա-յերեկոյան մայր մտնող արեի ճառագայթների տակ Դունդիչին թաղեցին:

«Վորքա՛ն վոգեորություն և անխարդախ սեր Ե-յին Հայուաբերում մարտիկները, — զրում եր կ. Յե. Վորոշիլովը «Կրասնի կավալերիստ» թերթում 1922 թվի նոյեմբերի 17-ին, — իրենց հրամանատարներէ ու կոմիսարների նկատմամբ, վորոնք կովի ամենա-ծանր բռպեյին իրենց զորամասերի առջեռումն եյին լինում:

Հրամանատարի կամ կոմիսարի յուրաքանչյուր կորուստ յեռապատկում եր գեպի թշնամին ունեցած ատելությունը, և մարտիկների վրեժի յերդումն ի-րենց առաջնորդների գիտակների վրա հնչում եր վորպես սարսափելի սպանալիք և իրականանում ե-յին առաջին կովում, առաջին գրոհի ժամանակ:

Հեծելաբանակայինների հիշողության մեջ հավե-

ույան մնացին հիանալի հերոսների և կամունիզմի
համար մարտնչողների՝ դիվիզիաների պետք է խոռու-
նովի, Մորոզովի, Պարխոմենկոյի փառավոր անուն-
ները։ Հեծյալ դիվիզիաների այս հարազատ առաջ-
նորդները քաջության և բանվորա-դյուզացիական
գործին նվիրված լինելու յալադույն որինակ հանդի-
սանալով՝ հեղափոխության համար շատ բան արին։
Նրանց հիշատակը հարգում է հեծելաբանակայինը։
Նրանց կյանքը, պայքարը և մահը՝ մարտական դիր-
քերում մեղ՝ կենդանի մնացածներիս համար՝ որի-
նակներ են ծառայում։

... Իսկ Կարմիր Դունդիչը^օ։ Ո՞վ կարող է մո-
ռանալ նրան։ Քաջությամբ, անվեհերությամբ, բա-
րությամբ և լսկերական սրտակցությամբ ո՞վ կա-
րող է հավասարվել այս տառացիորեն հեքիաթային
հերոսին։ Նա մի առյուծ եր՝ քնքույշ մանկական սր-
տով։ Իսկ բրիգադների հրամանատարնե^օրը, իսկ
գնդերի հրամանատարնե^օրը, իսկ մեր հազարավոր
աննման հերոս հեծելաբանակայիննե^օրը, վորոնքիրենց
ըմբոստ ու աղնիվ գլուխները դրին անիծված իսկա-
քամուների դեմ մղած պայքարում՝ բոլոր ճակատնե-
քում։ Այդ բոլորը, վորակն մեր սեփական մարմնի
կենդանի կտորներ, մեր շարքերից գուրս կորզվեցին
թշնամիների ձեռքով։ Նրանք թանգ են մեղ համար,
ինչպես թանգ է մեղ համար այն գործը, վորի հա-
մար նրանք պայքարեցին ու մեռան։

Խոնարհնք մեր դրոշակները մեծ հեծ հերոսների մեծ
հիշատակի առաջ...»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ե
Չապայել Վասիլի Խվանովիչ	3
Շչորս Նիկոլայ Ալեքսանդրովիչ	43
Լաղո Սերգեյ Գեորգիեվիչ	64
Կոտովսկի Գրիգորի Խվանովիչ	84
Ֆարբեցիուս Յան Ֆրիցեվիչ	117
Պարխոմենկո Ալեքսանդր Յակովլեվիչ	141
Ռուդնել Նիկոլայ Ալեքսանդրովիչ	163
Դունդիչ Իվան Անտոնովիչ	194



Պատ. խմբագիր՝ Հ. Պարոնյան
Բուսերենից թարգմանեց՝ Հ. Սառիկյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Արքագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտըռլ ուղագրիչ՝ Յե. Տ.-Մինասյան



Գլամուտի լիտոգր. Վ-2173. Հրամ. № 4952.

Գամալել 582. Տիրաժ 4000.

Թուղթ 72×110. Տպագր. 6½ մամ.

Մեկ մամ. 51200 նշան.

Հանձնված և արտադրության 13 հունիսի 1939 թ.

Ստորագրված և տպագրության համար 30 հուլիսի 1939 թ.

Պետհրատի 1 տպարան, Ցերեան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0411461

